

**«Արմենիան Բափրը Փրոգրամ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ  
2009թ. դեկտեմբերի 31-ին  
ավարտված տարվա համար**

## **Բովանդակություն**

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	8
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9



**KPMG Armenia cjsc**  
8<sup>th</sup> floor, Erebuni Plaza Business Center,  
26/1 Vazgen Sargsyan Street  
Yerevan 0010, Armenia

**Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ**  
ՀՀ, Երևան, 0010  
Վ.Սարգսյանի փ. 26/1,  
«Էրեբունի Պլազա» Բիզնես-Կենտրոն,  
8-րդ հարկ

Telephone Գեռախոս + 374 (10) 566 762  
Fax Ֆաքս + 374 (10) 566 762  
Internet Ինտերնետ [www.kpmg.am](http://www.kpmg.am)

## Անկախ աուդիտորական եզրակացություն

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ  
Տնօրենների խորհրդի անդամներին

### Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ եզրակացություն

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունների (այսուհետ՝ «Խումբ») կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 31-ը դեկտեմբերի 2009թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական ծանոթագրությունները:

### *Ղեկավարության պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար*

Մույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն կազմման և ճշմարիտ ներկայացման համար պատասխանատու է ղեկավարությունը: Այս պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում: Այս պատասխանատվությունը ենթադրում է նաև համապատասխան հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրություն և կիրառություն, ինչպես նաև ողջամիտ հաշվապահական գնահատականների օգտագործում:

### *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի համապատասխան պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք համախմբված ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ համախմբված ֆինանսական հաշվետվությունների՝ խարդախությանը կամ սխալներով պայմանավորված էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների խելամուտության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան մեր կարծիքի հիմք հանդիսանալու համար:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով համախմբված ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Խմբի համախմբված ֆինանսական վիճակն առ 31-ը դեկտեմբերի 2009թ., ինչպես նաև նրա գործունեության համախմբված արդյունքներն ու դրամական միջոցների համախմբված հոսքերը այդ ամսաթվին ավարտված տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

*Հանգամանքների լուսարանում*

Առանց վերապահումով դրական կարծիք արտահայտելու՝ մենք ուշադրություն ենք հրավիրում ծանոթագրություն 2-ի (դ) կետին, որտեղ ներկայացվում է, որ Խումբը չի ակնկալում ստանալ դրամական միջոցների էական դրական հոսքեր իր ներկա գործառնություններից և ֆինանսավորման կարիք ունի Թեղուտի հանքը շահագործման նախապատրաստելու ու դրա ապագա գործունեությունը ծավալելու համար: Այս հանգամանքը, ծանոթագրություն 2-ի (դ) կետում ներկայացված այլ հիմնահարցերի հետ մեկտեղ, վկայում է էական անորոշության առկայության մասին, ինչը կարող է զգալի կասկածների տեղիք տալ գործունեությունն անընդհատության սկզբունքով շարունակելու Խմբի կարողության վերաբերյալ:

11 *S. Gh*

*S. Gh*

Էնդրյու Քոքսշել  
Տնօրեն

Շիրան Գասպարյան  
Փնդիտի բաժնի ղեկավար

*KPMG Armenia*






«Քեյ-Փի-Էմ-Ձի Արմենիա» ՓԲԸ  
16 հուլիսի 2010թ.

*«Արմենիան Զափրը Փրոգրամ» ՓԲԸ  
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն  
2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

<b>հազ. դրամ</b>	<b>Ծնթգ.</b>	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Հասույթ	5	25,482,898	17,557,710
Վաճառքի ինքնարժեք	6	(20,477,868)	(16,379,035)
<b>Համախառն շահույթ</b>		<b>5,005,030</b>	<b>1,178,675</b>
Այլ եկամուտ		234,752	347,885
Իրացման ծախսեր		(210,207)	(211,374)
Վարչական ծախսեր	7	(788,710)	(1,634,067)
Արժեզրկումից կորուստ	8	(161,083)	(2,665,972)
Այլ ծախսեր		(191,868)	(288,523)
<b>Գործառնական գործունեության արդյունքները</b>		<b>3,887,914</b>	<b>(3,273,376)</b>
Ֆինանսական եկամուտ	9	7,109	58,986
Ֆինանսական ծախսեր	9	(1,782,233)	(659,141)
<b>Ջուտ ֆինանսական ծախսեր</b>		<b>(1,775,124)</b>	<b>(600,155)</b>
<b>Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը</b>		<b>2,112,790</b>	<b>(3,873,531)</b>
Շահութահարկի գծով (ծախս)/եկամուտ	10	(848,427)	379,303
<b>Տարվա շահույթ/(վնաս)</b>		<b>1,264,363</b>	<b>(3,494,228)</b>
<b>Այլ համապարփակ եկամուտ</b>			
Արժեզրկումից կորուստ հիմնական միջոցների գծով՝ առանց շահութահարկի		-	(4,115,095)
<b>Ընդամենը համապարփակ եկամուտ/(վնաս) տարվա համար</b>		<b>1,264,363</b>	<b>(7,609,323)</b>

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Տնօրենների խորհրդի անդամների կողմից 2010թ. հուլիսի 16-ին և ստորագրվել են նրանց անունից:

Գագիկ Արզումանյան  
 Գործադիր տնօրեն

Տիգրան Խաչատրյան  
 Ֆինանսական տնօրեն

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 57-րդ էջերում ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	Ծնթգ.	2009թ.	2008թ.
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	11	7,715,993	5,237,583
Ոչ նյութական ակտիվներ		66,359	62,059
Ներդրումային գույք	12	161,410	428,650
Հանքարդյունաբերական գույք	13	2,722,449	2,717,785
Կապակցված կողմերին տրված փոխառություններ		48,522	23,449
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով	14	3,151,556	2,883,785
Փոխհատուցելի ԱԱՀ	16	657,888	472,012
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		9,378	9,378
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>14,533,555</b>	<b>11,834,701</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ	15	4,745,756	3,036,601
Ընթացիկ հարկային ակտիվներ		-	172,654
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	16	5,119,526	4,607,337
Կապակցված կողմերին տրված փոխառություններ		11,430	26,320
Կանխավճարի տեսքով կատարած ֆինանսական ծախսեր	17	151,030	151,030
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	18	1,121,870	19,320
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>11,149,612</b>	<b>8,013,262</b>
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>25,683,167</b>	<b>19,847,963</b>
<b>ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
<b>Սեփական կապիտալ</b>			
Բաժնետիրական կապիտալ	19	3,069,716	3,069,716
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ		837,080	883,643
Զբաղիված շահույթ		5,934,905	4,623,979
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>9,841,701</b>	<b>8,577,338</b>
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	20	5,432,169	6,709,719
Այլ վճարվելիք հարկեր		-	64,100
Պետական շնորհներ		74,738	76,263
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>5,506,907</b>	<b>6,850,082</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարկեր և փոխառություններ	20	7,235,665	3,578,456
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	21	2,424,058	789,240
Պահուստներ	22	48,286	52,408
Ընթացիկ հարկային պարտավորություններ		626,550	439
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>10,334,559</b>	<b>4,420,543</b>
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>15,841,466</b>	<b>11,270,625</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>25,683,167</b>	<b>19,847,963</b>

*«Արմենիան Զափրը Փրոգրամ» ՓԲԸ  
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն  
2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար*

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Հիմնական միջոցների վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
<b>Մնացորդը առ 1 հունվարի 2008թ.</b>	<b>3,069,716</b>	<b>5,439,850</b>	<b>7,677,095</b>	<b>16,186,661</b>
<b>Ընդամենը համապարփակ եկամուտ</b>				
Տարվա վնաս	-	-	(3,494,228)	(3,494,228)
<b>Այլ համապարփակ եկամուտ</b>				
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստ՝ առանց 1,028,819 հազար դրամ գումարով հետաձգված հարկի	-	(4,115,095)	-	(4,115,095)
<b>Ընդամենը համապարփակ վնաս տարվա համար</b>	<b>-</b>	<b>(4,115,095)</b>	<b>(3,494,228)</b>	<b>(7,609,323)</b>
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի իրացում	-	(441,112)	441,112	-
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008թ.</b>	<b>3,069,716</b>	<b>883,643</b>	<b>4,623,979</b>	<b>8,577,338</b>
<b>Ընդամենը համապարփակ եկամուտ</b>				
Տարվա շահույթ	-	-	1,264,363	1,264,363
<b>Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>1,264,363</b>	<b>1,264,363</b>
Հիմնական միջոցների վերագնահատման պահուստի իրացում	-	(46,563)	46,563	-
<b>Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.</b>	<b>3,069,716</b>	<b>837,080</b>	<b>5,934,905</b>	<b>9,841,701</b>

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է դիտարկվի 9-ից 57-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

հազ. դրամ	2009թ.	2008թ.
<b>ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b>		
Հաճախորդներից ստացված դրամական միջոցներ, ներառյալ ԱԱՀ	23,332,242	18,922,882
Պետական բյուջեից ստացված դրամական միջոցներ (ԱԱՀ)	3,634,000	4,245,000
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ, ներառյալ ԱԱՀ	(22,126,322)	(21,619,682)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(689,446)	(1,354,988)
Վճարված շահութահարկ	(49,662)	(228,917)
Վճարված հարկեր, բացառությամբ շահութահարկի	(348,253)	(686,353)
Վճարված տոկոսներ	(644,889)	(715,533)
<b>Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր</b>	<b>3,107,670</b>	<b>(1,437,591)</b>
<b>ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b>		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(2,490,084)	(5,483,597)
Ներդրումներ հանքարդյունաբերական գույքում	(4,664)	(333,260)
Ներդրումներ հետազոտման և գնահատման ակտիվներում	-	(394,564)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(4,300)	(14,000)
Հոսքեր հիմնական միջոցների վաճառքից	7,035	21,350
Տրված փոխառություններ	(25,981)	(1,330,485)
Տրված փոխառությունների մարում	15,798	1,306,630
Հոսքեր այլ ներդրումներից	-	28,000
Ստացված տոկոսներ	7,109	34,047
<b>Ներդրումային գործունեությամբ օգտագործված դրամական միջոցների հոսքեր</b>	<b>(2,495,087)</b>	<b>(6,165,879)</b>
<b>ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ</b>		
Հոսքեր փոխառություններից	5,538,445	9,578,634
Փոխառությունների մարում	(5,173,244)	(2,090,935)
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից</b>	<b>365,201</b>	<b>7,487,699</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)</b>	<b>977,784</b>	<b>(115,771)</b>
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	19,320	140,756
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	124,766	(5,665)
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ (ծնթգ. 18)</b>	<b>1,121,870</b>	<b>19,320</b>



## 1 Նախապատմություն

### (ա) Գործարար միջավայր

#### Հայաստանի գործարար միջավայրը

Հայաստանում տեղի են ունեցել քաղաքական և տնտեսական փոփոխություններ, որոնք ազդեցություն են ունեցել ու կշարունակեն ազդեցություն ունենալ այս միջավայրում գործող ձեռնարկությունների գործունեության վրա: Հետևաբար, Հայաստանի գործարար միջավայրում ծավալած գործունեությանը հատուկ են ռիսկեր, որոնք բնորոշ չեն այլ շուկաներին: Ի լրումն, կապիտալի և վարկային շուկաներում դիտվող ճգնաժամը ու դրա ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա ավելի են բարձրացրել տնտեսական անորոշության մակարդակը գործարար միջավայրում: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Խմբի ֆինանսական վիճակի և գործառնությունների վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

### (բ) Կազմակերպությունը և հիմնական գործունեությունը

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») և նրա դուստր ընկերությունը՝ «Թեղուտ» ՓԲԸ-ն (միասին՝ «Խումբ») իրենցից ներկայացնում են փակ բաժնետիրական ընկերություններ՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Ընկերությունը հիմնադրվել է 1997թ. օգոստոսին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Խանջյան փ. 19:

Ընկերության ներկայիս հիմնական գործունեությունը սև պղնձի արտադրությունն ու իրացումն է Ալավերդու պղնձաձուլական գործարանում, Հայաստանի Հանրապետությունում: Ներկայումս Ընկերության ողջ արտադրանքն իրացվում է Հայաստանի սահմաններից դուրս: Ի լրումն, Խումբը ներգրավված է Թեղուտի հանքում հանքարդյունաբերական գույքի զարգացման և հանքի տարածքում հարստացուցիչ գործարանի կառուցման աշխատանքներում: Խումբը նախատեսում է ապագայում զբաղվել Թեղուտի հանքում մոլիբդենի և պղնձի խտանյութի արդյունահանման, մշակման ու իրացման գործունեությամբ:

Խմբի հայտարարված կապիտալը կազմում է 5 միլիարդ դրամ: 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի բաժնետերերն էին՝

- «ՎԱԼԼԵՔՍ Ֆ.Մ. Իսթերիշմենթ» (հիմնադրված Լիխտենշտեյնում) - 80.7%
- Վալերի Մեջլումյան - 19.3%

Խմբի վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Վալերի Մեջլումյանը, ով իրավասու է կառավարել Խմբի գործառնություններն իր հայեցողությամբ և իր շահերից ելնելով: Նա նաև մասնակցություններ ունի Խմբին չպատկանող այլ ընկերություններում: Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են ծանոթագրություն 28-ում:

## **2 Պատրաստման հիմունքներ**

### **(ա) Համապատասխանության մասին հայտարարություն**

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՄ») պահանջներին համապատասխան:

### **(բ) Չափման հիմունքները**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ հիմնական միջոցների, որոնք կանոնավոր հիմունքով վերաչափվում են իրական արժեքով և որպես վաճառքի համար մատչելի դասակարգված ներդրումների, որոնք հաշվառվում են իրական արժեքով:

### **(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»): Դրամը հանդիսանում է Խմբի ֆունկցիոնալ արժույթը և համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

### **(դ) Անընդհատության սկզբունք**

2008թ-ի երրորդ եռամսյակում պղնձի գների զգալի անկման պատճառով Խումբը դադարեցրեց Ալավերդու հանքի շահագործման աշխատանքները և ճանաչեց արժեզրկումից կորուստ Ալավերդու հանքի հանքարդյունաբերական գույքի ու այն հիմնական միջոցների գծով, որոնք վերաբերում են Ալավերդու հանքին և Ալավերդու պղնձածուլական գործարանին:

Թեև պղնձի գները մասնակիորեն վերականգնվեցին 2009թ-ին, ղեկավարությունը չի պլանավորում սկսել Ալավերդու հանքի շահագործումը մոտ ապագայում՝ հանքաքարի պաշարների հետ կապված անորոշության և ոչ բարենպաստ կոմերցիոն իրագործելիության պատճառով: Գեկավարությունը նաև կանխատեսում է, որ գործունեության շարունակումը և Ալավերդու պղնձածուլական գործարանից ստացվող սև պղնձի վաճառքը կարող են հանգեցնել միայն ոչ բավարար շահույթի ձևավորմանը մոտ ապագայում, ինչը պայմանավորված է արտադրության ինքնարժեքի աճով: Համախառն շահույթի աճը 2009թ-ին հիմնականում պայմանավորված է գների տատանումներով 2009թ. ընթացքում, քանի որ խտանյութի գնումների վերջնական գնի գնորոշման ժամկետը (որոշված Ընկերության կողմից) ավելի երկար է սև պղնձի վաճառքի գնորոշման ժամկետից:

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 1(բ)-ում, Խումբը ներկայումս զբաղվում է Թեղուտի հանքը շահագործման նախապատրաստելու աշխատանքներով: Թեղուտի հանքի ապագա գործարկման համար աշխատուժի առկայությունն ապահովելու նպատակով՝ Խումբը մտադիր է շարունակել սև պղնձի արտադրությունը Ալավերդու պղնձածուլական գործարանում առնվազն մինչև Թեղուտի հանքի արտադրական սարքավորումների գործարկելի դառնալը:

Խմբին պահանջվում են զգալի ֆինանսական միջոցներ Թեղուտի հանքը շահագործման փուլին հասցնելու, պղնձի ու մոլիբդենի խտանյութի արտադրությունը սկսելու և ՀՀ կառավարության նկատմամբ ստանձնած պարտավորվածությունները կատարելու համար: Գեկավարության գնահատմամբ հանքը շահագործման նախապատրաստելու, գործարանը և այլ շինությունները կառուցելու համար կպահանջվի երկու տարի՝ սկսած հաշվետու

ամսաթվից, իսկ խտանյութի արտադրությունը կսկսվի երրորդ տարում: Այսպիսով, Խմբի ապագա գործառնությունների վրա էական ազդեցություն կունենան Թեղուտի հանքի շահագործման սկզբնական ներդրումային փուլի համար ֆինանսավորում ստանալու ժամկետները:

2008թ. հունիսին Ընկերությունը ստորագրեց վարկային պայմանագիր «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ի (Ռուսաստանի Դաշնություն) հետ՝ 249,500 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով վարկային գծի համար (1 ԱՄՆ դոլարը = 377.89 դրամ՝ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ): Հետագայում, իրացվելիության ճգնաժամը և մետաղի գների անկումը համաշխարհային շուկայում 2008թ. երկրորդ կեսին հանգեցրին ֆինանսավորման դադարեցմանը: 2009թ. մարտի սկզբից մետաղի գները սկսեցին վերականգնվել համաշխարհային շուկայում: 2009թ-ին «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ի հետ համաձայնեցվեցին 283,300 հազար ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով նոր վարկային պայմանագրի նոր հիմնական պայմանները, որը պետք է փոխարինի բանկի հետ կնքած առաջին պայմանագիրը: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների ստորագրման ամսաթվի դրությամբ նոր վարկային պայմանագիրը գտնվում էր «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ի ղեկավարության կողմից ուսումնասիրման և հաստատման փուլում:

Ի լրումն, Խումբն ունի զգալի կարճաժամկետ վարկեր և փոխառություններ, ինչպես ներկայացված է ծանոթագրություն 20-ում: Խմբի ներկայիս գործունեության ոչ շահութաբեր լինելը և ապագա ֆինանսավորման հետ կապված անորոշությունները կարող են ազդեցություն ունենալ նոր փոխառություններ ձեռք բերելու և առկա փոխառությունները՝ նախկինում իրականացվող գործարքների պայմաններին համանման պայմաններով վերաֆինանսավորելու Խմբի կարողության վրա: Վերջնական վերահսկող կողմ հանդիսացող բաժնետերն իր մտադրությունն է հայտնել անհրաժեշտության դեպքում Խմբին ապահովել պահանջվող ֆինանսական աջակցությամբ և իրացվելիությամբ գործունեությունը շարունակելու համար:

Վերը ներկայացված էական անորոշությունը կարող է զգալի կասկածներ հարուցել անընդհատության հիմունքով գործունեությունը շարունակելու Խմբի կարողության վերաբերյալ, և, այդ իսկ պատճառով, Խումբը կարող է ի վիճակի չլինել իրացնել ակտիվները ու մարել պարտավորությունները բնականոն գործունեության ընթացքում:

Ներկայացվող համախմբված ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում որևէ ճշգրտում գործունեությունն անընդհատության սկզբունքով շարունակելու Խմբի անկարողության հետ կապված, քանի որ ղեկավարությունը մոտ ապագայում ակնկալում է «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ից ձեռք բերել բավարար ֆինանսավորում Թեղուտի հանքի շահագործման նախապատրաստելու աշխատանքները շարունակելու համար:

**(ե) Գնահատումների և դատողությունների օգտագործում**

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Այն ենթադրությունների և գնահատումների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ենթադրում են հաջորդ ֆինանսական տարում էական ճշգրտման ռիսկ, ներկայացված է հետևյալ ծանոթագրություններում.

- Ծանոթագրություն 2 (դ) – անընդհատության սկզբունք,
- Ծանոթագրություն 2 (զ) – հանքաքարի պաշարներ,
- Ծանոթագրություն 11 – հիմնական միջոցների և հանքարդյունաբերական գույքի արժեզրկում,
- Ծանոթագրություն 14 – ոչ ընթացիկ ակտիվների գծով կատարած կանխավճարների փոխհատուցում,
- Ծանոթագրություն 22 – պահուստներ:

#### **(զ) Հանքաքարի պաշարներ**

Թեղուտի հանքի հանքաքարի առաջին գնահատումը կատարել է ԽՍՀՄ Պաշարների պետական կոմիտեն 1991թ-ին: Կոմիտեի գնահատմամբ հանքաքարի պաշարները կազմում էին մոտավորապես 454 միլիոն տոննա, որում պղնձի միջին բաղադրությունը կազմում էր 0.35%, իսկ մոլիբդենի միջին բաղադրությունը՝ 0.022%:

Հանքի հանքաքարի ընդհանուր պաշարների մոտ 35%-ի գնահատումները վերագնահատվել են և հանքի շահագործման առաջին փուլի պլանը մշակվել է 2008թ-ի կեսերին՝ Strathcona Mineral Services Limited կողմից օգտակար հանածոների գնահատման և հաշվետվությունների ներկայացման միջազգային ստանդարտների համաձայն, որի արդյունքներն հետևյալն են (միլիոն տոննայով)՝ 135,8 - չափված (Measured), 14.2 - ենթադրվող (Indicated), 16.6 - նախնական գնահատված (Inferred): Գնահատման և շահագործման պլանի առաջին փուլը ենթադրում է 113.6 միլիոն տոննա հանքաքարի արդյունահանում մինչև 2022թ., որում պղնձի միջին բաղադրությունը կկազմի 0.33% և մոլիբդենի միջին բաղադրությունը՝ 0.011%: Հանքաքարի մնացած պաշարների համար պետք է մշակվեն գնահատման և շահագործման պլաններ, երբ շահագործման առաջին փուլը մոտենա իր ավարտին:

Հանքաքարի պաշարների քանակությունները գնահատելիս առկա են մի շարք անորոշություններ, ներառյալ Խմբի վերահսկողության ներքո չգտնվող բազմաթիվ գործոններ: Հանքաքարի պաշարների գնահատումները հիմնված են հորատանցքների և այլ հանքանցքերի հանքաքարի նմուշներում բաղկացուցչի պարունակության ինժեներական գնահատումների վրա: Ի լրումն, որոշակի մետաղի շուկայական արժեքի նվազումը կարող է հանգեցնել նրան, որ միներալիզացիայի ցածր աստիճան ունեցող հանքաքարի որոշ պաշարներ կարող են դիտվել տնտեսապես ոչ նպատակահարմար հանքի հետագա օգտագործման համար: Ավելին, գործունեության իրականացման և բնօգտագործման թույլտվությունների առկայությունը, գործառնական և կապիտալ ծախսերի փոփոխությունները և այլ գործոնները կարող են էական ազդեցություն ունենալ Խմբի հանքաքարի պաշարների գնահատումների վրա:

Խումբը գործում է Թեղուտի պղնձ-մոլիբդենային հանքի վերահսկման և շահագործման Լիցենզիայի շրջանակներում, որի գործողության ժամկետը լրանում է 2026թ-ին: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը ենթադրել է, որ Լիցենզիայի ժամկետը կերկարաձգվի 2026թ-ից հետո: Այս ենթադրությունը հիմնված է Կոնցեսիայի մասին օրենքի դրույթների վրա, համաձայն որի Լիցենզիան կարող է երկարաձգվել, եթե տեղի չեն ունեցել Լիցենզիայով նախատեսված պարտավորությունների էական խախտումներ Լիցենզիայի գործողության ժամկետի ընթացքում:

Խումբը հանքաքարի պաշարների իր գնահատումներն օգտագործում է հիմնական միջոցների և հանքարդյունաբերական գույքի արժեզրկումը և օգտակար ծառայության ժամկետները գնահատելիս:

**(ե) Հաշվապահական հաշվառման քաղաքականության և ներկայացման փոփոխություններ**

2009թ. հունվարի 1-ից Խումբը փոփոխություններ կատարեց ֆինանսական հաշվետվությունների ներկայացմանը վերաբերող իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Խումբը կիրառում է վերանայված ՀՀՍՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (2007թ.) ստանդարտը, որն ուժի մեջ է մտել 2009թ. հունվարի 1-ին: Վերանայված ստանդարտը պահանջում է, որպեսզի սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունում ներկայացվեն սեփականատերերի հետ իրականացված գործառնությունների արդյունքում սեփական կապիտալի բոլոր փոփոխությունները, մինչդեռ ոչ սեփականատերերի հետ իրականացված գործառնությունների արդյունքում սեփական կապիտալի բոլոր փոփոխությունները ներկայացվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Համեմատական տեղեկատվությունը վերաներկայացվել է վերանայված ստանդարտի պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

**3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն**

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, բացառությամբ ծանոթագրություն 2 (է) կետում ներկայացվածի, որը վերաբերում է հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններին:

**(ա) Համախմբման հիմունքներ**

**(i) Դուստր ընկերություններ**

Դուստր ընկերությունները Խմբի կողմից վերահսկվող ընկերություններ են: Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ներառվում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝ վերահսկումը սկսելու պահից մինչև վերահսկման դադարեցումը: Դուստր ընկերությունների կողմից կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունում անհրաժեշտության դեպքում կատարվում են փոփոխություններ՝ Խմբի կողմից ընդունված քաղաքականության հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

**(ii) Համախմբման ընթացքում բացառվող գործառնություններ**

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս բացառվում են ներխմբային հաշվարկների մնացորդներն ու գործառնությունները, ինչպես նաև ներխմբային գործառնություններից առաջացող ցանկացած չիրացված եկամուտները և ծախսերը:

**(բ) Արտարժույթ**

**(i) Արտարժույթով գործարքներ**

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Խմբի համապատասխան ֆունկցիոնալ արժույթի գործարքների օրվա դրությամբ սահմանված փոխարժեքներով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային միավորների գծով արտարժույթով իրականացված գործարքներից շահույթը կամ վնասը հանդիսանում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով ճշգրտված ամորտիզացված արժեքի ու արտարժույթով արտահայտված և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը: Վերափոխարկումներից առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Սկզբնական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային միավորները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

**(գ) Ֆինանսական գործիքներ**

**(i) Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ**

Ոչ ածանցյալ գործիքները ներառում են առևտրական և այլ դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, վարկերը և փոխառությունները, առևտրական և այլ կրեդիտորական պարտքերը:

Խումբը վարկերը և դեբիտորական պարտքերը ու ավանդները սկզբնապես ճանաչում է իրական արժեքով դրանց առաջացման օրը: Բոլոր այլ ֆինանսական ակտիվները (ներառյալ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվները) սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Խումբն ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի ստացման պայմանագրային իրավունքներն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Մասնակցությունը փոխանցված ակտիվում, որն առաջացել կամ պահպանվել է Խմբի կողմից, ճանաչվում է որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն:

Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են վարկերը և դեբիտորական պարտքերը:

***Վարկեր և դեբիտորական պարտքեր***

Վարկերը և դեբիտորական պարտքերն իրենցից ներկայացնում են ֆիքսված կամ որոշելի վճարումներով ակտիվներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում: Այս ակտիվներն ի սկզբանե ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստները: Վարկերը և դեբիտորական պարտքերը ներառում են առևտրական ու այլ դեբիտորական պարտքերը և տրված փոխառությունները:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում դրամական միջոցների մնացորդները և ցպահանջ ավանդները: Բանկային օվերդրաֆտները, որոնք ենթակա են վճարման ըստ պահանջի և կազմում են Խմբի դրամական միջոցների կառավարման բաղկացուցիչ մասը, համարվում են դրամական միջոցների և դրանց համարժեքների տարր դրամական միջոցների հոսքերի հաշվետվության նպատակների համար:

**(ii) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ**

Խումբը պարտքային արժեթղթերը սկզբնապես ճանաչում է իրական արժեքով՝ դրանց առաջացման օրը: Բոլոր ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում առք ու վաճառքի օրը, երբ Խումբը դառնում է գործիքի պայմանագրային դրույթների կողմ:

Խումբն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցնում է:

Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններն են վարկերն ու փոխառությունները և առևտրական ու այլ կրեդիտորական պարտքերը:

Այս ֆինանսական պարտավորությունների սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով՝ գումարած գործարքին ուղղակիորեն վերագրելի բոլոր ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ոչ ածանցյալ ֆինանսական գործիքները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

**(iii) Ածանցյալ ֆինանսական գործիքներ**

Ածանցյալ գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, գործարքին վերագրելի բոլոր ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակ: Սկզբնական ճանաչումից հետո ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, որի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Պարունակվող ածանցյալ գործիքներն առանձնացվում են հիմնական պայմանագրից և հաշվառվում են առանձին, եթե պարունակվող ածանցյալ գործիքի տնտեսական բնութագրերը և ռիսկերը սերտորեն կապված չեն հիմնական պայմանագրի տնտեսական բնութագրերի և ռիսկերի հետ, առանձին գործիքը, որի պայմանները նման են պարունակվող ածանցյալ գործիքի պայմաններին, կբավարարեր ածանցյալ գործիքի սահմանմանը, իսկ բաղադրյալ գործիքը չի չափվում իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով: Առանձնացվող պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

**(iv) Բաժնետիրական կապիտալ**

*Սովորական բաժնետոմսեր*

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսումները ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազում՝ առանց հաշվի առնելու հարկային հետևանքները:

**(դ) Հիմնական միջոցներ**

**(i) Դանաչում և չափում**

Հիմնական միջոցների միավորները ներկայացված են վերագնահատված արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջակա-նորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, տեղանքի վերականգնման ծախսերը, ինչպես նաև կապիտալացված փոխառության ծախսումները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը և վնասը որոշվում են համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ճանաչվում են զուտ հիմունքով «Այլ եկամուտ» կամ «Այլ ծախսեր» հոդվածում՝ շահույթում կամ վնասում: Վերագնահատված ակտիվների վաճառքի դեպքում, վերագնահատման պահուստնում ներառված գումարները փոխանցվում են չբաշխված շահույթ:

**(ii) Հետագա ծախսումներ**

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Խումբը կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և վերջինիս արժեքը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

**(iii) Վերագնահատում**

Հիմնական միջոցները չափվում են իրական արժեքով՝ արտաքին անկախ գնահատողի կողմից իրականացված պարբերական գնահատումների արդյունքների հիման վրա: Հիմնական միջոցների միավորի հաշվեկշռային արժեքի վերագնահատման հետևանքով առաջացած աճն անմիջականորեն վերագրվում է սեփական կապիտալին: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն ակտիվի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը հակադարձում է նույն ակտիվի սեփական կապիտալում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, այն ճանաչվում է սեփական կապիտալում: Վերագնահատված ակտիվի վաճառքի դեպքում վերագնահատման պահուստում ներառված գումարը փոխանցվում է չբաշխված շահույթ: Հիմնական միջոցների վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության տարբերությունը վերագնահատման պահուստից փոխանցվում է չբաշխված շահույթ:



**(iv) Մաշվածություն**

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- |                         |            |
|-------------------------|------------|
| • շենքեր                | 20-50 տարի |
| • մեքենա-սարքավորումներ | 2-20 տարի  |
| • փոխադրամիջոցներ       | 5-10 տարի  |
| • տնտեսական գույք       | 5-10 տարի  |

Հիմնական միջոցների մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**(ե) Ներդրումային գույք**

Ներդրումային գույքը ներկայացված է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ներդրումային գույքի առանձին միավորների օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ներդրումային գույքի համար օգտակար ծառայության գնահատված ժամկետը կազմում է 50 տարի:

**(զ) Ոչ նյութական ակտիվներ**

**(i) Ոչ նյութական ակտիվներ**

Խմբի կողմից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները, որոնք ունեն օգտակար ծառայության սահմանափակ ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

**(ii) Հետագա ծախսումներ**

Հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ Խմբի ներսում ստեղծված գույքի լի և ֆիրմային անվանումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

**(iii) Անորտիզացիա**

Անորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետներն ընթացիկ և համեմատական ժամանակաշրջանների համար հետևյալն են.

- համակարգչային ծրագրեր 10 տարի
- լիցենզիաներ լիցենզիայի գործողության ժամկետը
- այլ ոչ նյութական ակտիվներ 5-10 տարի

Անորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**(ե) Վարձակալված ակտիվներ**

Այն վարձակալությունը, որի դեպքում Խմբին են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, հանդիսանում է ֆինանսական վարձակալություն: Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված ակտիվները չափվում են իրական արժեքից և նվազագույն վարձակալական վճարների ներկա արժեքից նվազագույնով: Սկզբնական ճանաչումից հետո ակտիվը հաշվառվում է տվյալ ակտիվի նկատմամբ կիրառելի հաշվապահական հաշվառման քաղաքականության համաձայն:

Վարձակալության մյուս տեսակները հանդիսանում են գործառնական վարձակալություն, և այդ վարձակալության պայմաններով վարձակալված ակտիվները չեն ճանաչվում Խմբի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

**(ը) Հետազոտման և գնահատման ակտիվներ**

Հետազոտման և գնահատման ծախսումները վերաբերում են հանքերի պոտենցիալ պաշարների հետազոտման և գնահատման ժամանակ կրած ծախսումներին ու ներառում են այնպիսի ծախսումներ, ինչպիսիք են հանքերի շահագործման իրավունքի ձեռք բերման ծախսումները, երկրաբանական և գեոֆիզիկական ծախսումները, հետազոտական հորատման ծախսումները, նմուշների փորձարկման ծախսումները, նպատակահարմարության ուսումնասիրությանը նախորդող ծախսումները, մոնտաժման և արտադրական սարքավորումների գծով ծախսումներն ու հետազոտական աշխատանքների հետ կապված վերադիր ծախսերը:

Հետաքրքրության ներկայացնող յուրաքանչյուր տեղամասի հետազոտման և գնահատման ծախսումները կապիտալացվում ու արտացոլվում են հաջորդ ժամանակաշրջանում որպես ակտիվ՝ ստորև ներկայացված պայմաններից որևէ մեկին համապատասխանելու դեպքում.

- մման ծախսումների փոխհատուցումն ակնկալվում է հետաքրքրություն ներկայացնող տեղամասի հաջող մշակման և հետազոտման կամ, որպես այլընտրանքային տարբերակ, վերջինիս վաճառքի միջոցով, կամ
- հետաքրքրություն ներկայացնող տեղամասում իրականացվող հետազոտման և գնահատման աշխատանքները դեռ չեն հասել այնպիսի փուլի, որը թույլ է տալիս ըստ պատշաճի գնահատել տնտեսապես փոխհատուցելի պաշարների առկայությունը կամ հակառակը, ինչպես նաև տեղամասում պլանավորվում է շարունակել կամ ապագայում իրականացնել ակտիվ և զգալի աշխատանքներ:

Հետազոտման և գնահատման ակտիվները դասակարգվում են նյութական և ոչ նյութական ակտիվների՝ ելնելով իրենց բնույթից: Հետազոտման և գնահատման ակտիվների վերը նշված դասակարգումը դադարում է, երբ ի հայտ է գալիս հանքի շահագործման տեխնիկական նպատակահարմարությունը և առևտրային կենսունակությունը: Այդ դեպքում հետազոտման և գնահատման ակտիվները վերադասակարգվում են որպես հանքարդյունաբերական գույք:

Նախքան հանքերի շահագործման իրավունքի ձեռքբերումն իրականացվող գործունեությունը համարվում է նախահետազոտություն: Նախահետազոտության գծով ծախսումները ծախսագրվում են և ներառում են այնպիսի ծախսումներ, ինչպիսիք են ծրագրի սկզբնական տեխնիկական ու տնտեսական գնահատման, հանքանյութի երկրաբանական մոդելի սահմանման և գնահատման, հետազոտությանը նախորդող աշխատանքների հետ կապված վերադիր ծախսերը:

**(թ) Հանքարդյունաբերական գույք**

Հանքարդյունաբերական գույքը ներկայացված է սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Հետաքրքրություն ներկայացնող տեղամասի հետ կապված սկզբնական արժեքն իրենից ներկայացնում է վերադասակարգված հետազոտման ու գնահատման ակտիվները և մակաբացման ու հանքաքարի արդյունահանման նախապատրաստման աշխատանքներին ուղղակիորեն վերագրելի ծախսումները:

Հանքարդյունաբերական գույքը ենթարկվում է մաշվածության, որը հաշվարկվում է կիրառելով արդյունքի միավորի մեթոդը, հիմք ընդունելով տնտեսապես փոխհատուցելի գնահատված պաշարները, որոնց վերաբերում են, կամ այն դուրս է գրվում գույքի չօգտագործման դեպքում:

**(ժ) Պաշարներ և վաճառքի ինքնարժեք**

Պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների սկզբնական արժեքը հիմնված է միջին կշռված արժեքի վրա և ներառում է պաշարների ձեռք բերման, արտադրման կամ մշակման ծախսումները, ինչպես նաև պաշարները ներկա գտնվելու վայր ու ներկա վիճակի բերելու հետ կապված ծախսումները: Սեփական ուժերով պատրաստված պաշարների և անավարտ արտադրանքի սկզբնական արժեքը ներառում է արտադրական վերադիր ծախսերի համապատասխան մասը՝ ելնելով սովորական արտադրական հզորությունից:

Իրացման գուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատվող գինն է՝ հանած ավարտի հասցման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսերը:

Խմբի պղնձի խտանյութի գնման պայմանագրերը սովորաբար նախատեսում են նախնական վճարումներ, ինչպես նշված է առանձին պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի պատմական արժեքն ընդհանրապես գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի շուկայական գներից, որոնք միջինացված են գնանշման որոշակի ապագա ժամանակահատվածի համար: Որպես կանոն, պղնձի խտանյութի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկուսից չորս ամիս՝ փոխադրման ամսաթվից հետո:

Խմբի՝ պայմանականորեն գնանշվող գնման պայմանագրերը ներառում են պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք, ապրանքի գնմանն առնչություն չունենալու պատճառով, պետք է առանձնացվեն հիմնական պայմանագրից՝ հաշվապահական հաշվառման նպատակների համար: Պարունակվող ֆինանսական գործիքը, որն իրենից ներկայացնում է ապագա գնի վրա հիմնված վերջնական հաշվարկային գինը, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցվում է որպես կրեդիտորական պարտք կամ վճարված կանխավճար և յուրաքանչյուր ժամանակաշրջանում վերագնահատվում է (իրական արժեք) վաճառքի ինքնարժեքի միջոցով՝ հաշվի առնելով ապրանքի ֆորվարդային կորը մինչև վերջնահաշվարկի ամսաթիվը:

**(բ) Արժեզրկում**

**(i) Ֆինանսական ակտիվներ**

Ֆինանսական ակտիվը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արժեզրկման անկողմնակալ վկայություն հայտնաբերելու նպատակով: Ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, եթե անկողմնակալ վկայությունը ցույց է տալիս, որ ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի է ունեցել կորստի դեպք, և այդ կորստի դեպքը բացասական ազդեցություն է ունեցել տվյալ ֆինանսական ակտիվի ապագա գնահատված դրամական հոսքերի վրա, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների (ներառյալ բաժնային արժեթղթերի) արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտականությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը պարտապանի կողմից, Խումբն վճարվելիք գումարի պայմանների այնպիսի վերանայում, որը Խումբն այլ հանգամանքներում չէր դիտարկի, պարտապանի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի ակտիվ շուկայի վերացումը: Ի լրումն, բաժնային արժեթղթերում կատարած ներդրումների համար արժեզրկման անկողմնակալ վկայություն է համարվում դրանց իրական արժեքի զգալի կամ երկարաձգված նվազումը սկզբնական արժեքից:

Խումբը դիտարկում է արժեզրկման վկայությունն անհատական և խմբային հիմունքներով: Բոլոր առանձին վերցված նշանակալի դեբիտորական պարտքերը գնահատվում են արժեզրկման տեսանկյունից՝ անհատական հիմունքով: Եթե բոլոր առանձին վերցված նշանակալի դեբիտորական պարտքերի արժեզրկման առանձին վկայություն չի հայտնաբերվում, ապա դրանք գնահատվում են հավաքական հիմունքով՝ տեղի ունեցած, սակայն չբացահայտված արժեզրկման վկայություն հայտնաբերելու նպատակով: Դեբիտորական պարտքերը, որոնք առանձին վերցված նշանակալի չեն, գնահատվում են արժեզրկման տեսանկյունից հավաքական հիմունքով՝ խմբավորելով ռիսկի համանման բնութագրերով դեբիտորական պարտքերը:

Հավաքական արժեզրկումը գնահատելիս Խումբը դիտարկում է պարտականությունների չկատարման նախկինում առկա միտումները, մարումների ժամկետները, կրած վնասի գումարը, որոնք ճշգրտվում են հաշվի առնելով ղեկավարության դատողությունները, թե արդյոք ներկա տնտեսական և վարկավորման պայմանները թույլ են տալիս, որպեսզի փաստացի վնասն ավել կամ պակաս լինի նախկինում առկա միտումներով առաջարկվողներից:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվի արժեզրկումից կորուստը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն: Կորստի գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում և արտացոլվում է պահուստային հաշվում՝ դեբիտորական պարտքերի դիմաց: Խումբը շարունակում է ճանաչել արժեզրկված ակտիվի գծով տոկոսները զեղչի վերականգնման միջոցով: Եթե հետագայում տեղի ունեցած դեպքը հանգեցնում է

արժեզրկումից կորստի գումարի նվազեցմանը, ապա արժեզրկումից կորստի գումարի նվազեցումը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով:

**(ii) Ոչ ֆինանսական ակտիվներ**

Խմբի ոչ ֆինանսական ակտիվների, բացառությամբ պաշարների և հետաձգված հարկային ակտիվների, հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ որոշելու արդյոք առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված համարվել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են ակտիվի փոխհատուցվող գումարը:

Հետագոտման և գնահատման ակտիվների համար ստորև ներկայացված փաստերն ու հանգամանքները վկայում են վերջիններս արժեզրկման տեսանկյունից ստուգելու անհրաժեշտության մասին.

- այն ժամանակահատվածը, որի ընթացքում կազմակերպությունն իրավունք ունի շահագործել առանձին տեղամասը, լրացել է հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում կամ կլրանա մոտ ապագայում՝ առանց երկարաձգման ակնկալիքի,
- առանձին տեղամասում հանքանյութի հետագա հետագոտման և գնահատման հետ կապված էական ծախսումները բյուջեով նախատեսված ու պլանավորված չեն,
- առանձին տեղամասում հանքանյութի հետագոտումը և գնահատումը չի հանգեցրել կոմերցիոն տեսանկյունից կենսունակ քանակությամբ հանքային ռեսուրսների հայտնաբերմանը, և կազմակերպությունը որոշել է դադարեցնել այս գործունեությունն առանձին տեղամասում, ինչպես նաև
- առկա է բավարար տեղեկատվություն առ այն, որ թեև մշակման աշխատանքներն ըստ երևույթի կշարունակվեն առանձին տեղամասում, այնուամենայնիվ, հետագոտման և գնահատման ակտիվների հաշվեկշռային արժեքի ամբողջական փոխհատուցումը հաջող մշակման կամ վաճառքի միջոցով քիչ հավանական է:

Ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շուկայի ներկա գնահատականը և այդ ակտիվին բնորոշ ռիսկերը: Արժեզրկման ստուգման նպատակով ակտիվները խմբավորվում են ակտիվների փոքրագույն խմբերի, որոնք շարունակական օգտագործման արդյունքում առաջացնում են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից մեծապես անկախ դրամական միջոցների ներհոսքեր («դրամաստեղծ միավոր»):

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Դրամաստեղծ միավորի գծով ճանաչված արժեզրկումից կորուստը բաշխվում է համամասնական հիմունքով՝ դրամաստեղծ միավորի (միավորների խմբի) կազմի մեջ մտնող ակտիվների հաշվեկշռային արժեքը նվազեցնելու նպատակով:

Նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեզրկումից կորուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բացահայտելու, թե առկա է արդյոք որևէ հայտանիշ, ըստ որի արժեզրկումից կորուստը հնարավոր է, որ այլևս գոյություն չունի կամ նվազել է: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն

հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության կամ ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

**(լ) Աշխատակիցների հատուցումներ**

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:

Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճարների կամ շահույթի բաշխման պլանների համաձայն, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

**(խ) Հատկացումներ կենսաթոշակային հիմնադրամին**

Խումբը հատկացումներ է կատարում Հայաստանի պետական կենսաթոշակային հիմնադրամին հոգուտ իր աշխատակիցների: Այդ հատկացումները ծախսագրվում են կատարվելու ժամանակաշրջանում:

**(ծ) Պահուստներ**

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակային արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը:

***Տեղանքի վերականգնում***

Խմբի բնապահպանության քաղաքականության և կիրառելի օրենսդրական պահանջների համաձայն տեղանքի վերականգնման ու ծառատունկի գծով ճանաչվում է պահուստ բաց հանքի շահագործման, հանքաքարի թափոնների կուտակման, ենթակառուցվածքների և հանքի տարածքում պոչամբարի ու գործարանի կառուցման հետ կապված: Համապատասխան ակտիվը ճանաչվում է հիմնական միջոցներում: Տեղանքի վերականգնման ծախսերը գնահատվում են ելնելով պարտականությունը կատարելու համար պահանջվող ծախսերի ներկա արժեքից՝ կիրառելով դրամական միջոցների գնահատված հոսքերը: Դրամական միջոցների հոսքերը զեղչվում են ռիսկի գործոն չպարունակող մինչև հարկումը ընթացիկ դրույքով: Չեղչի վերականգնումը ծախսագրվում է այն կրելիս և ճանաչվում է շահույթում կամ վնասում որպես ֆինանսական ծախս: Տեղանքի վերականգնման ապագա գնահատված ծախսերը վերանայվում են տարեկան կտրվածքով և փոփոխվում են ըստ անհրաժեշտության: Ապագա գնահատված ծախսերի, վերականգնման ժամկետների կամ կիրառվող զեղչի դրույքի փոփոխություններն ավելացվում կամ նվազեցվում են համապատասխան ակտիվի սկզբնական արժեքից:

**(կ) Հասույթ**

**(i) Վաճառված ապրանքներ**

Բնականոն գործունեության ընթացքում ապրանքների վաճառքից ստացված հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով՝ առանց վերադարձումների, առևտրային զեղչերի և իջեցումների: Հասույթը ճանաչվում է համոզիչ վկայության առկայության դեպքում, սովորաբար վաճառքի իրագործված պայմանագրի տեսքով, համաձայն որի գնորդին են փոխանցվել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը, հատուցման ստացումը հավանական է, հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված ծախսերը ու ապրանքների հնարավոր վերադարձը, չի դիտվում շարունակական մասնակցություն ապրանքների կառավարմանը և հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը: Եթե գոյություն ունի հավանականություն, որ կտրամադրվեն զեղչեր և գումարը հնարավոր կլինի արժանահավատորեն չափել, ապա զեղչը ճանաչվում է որպես հասույթի նվազեցում՝ վաճառքի ճանաչման պահին:

Սև պղնձի վաճառքին վերաբերող ռիսկերի և հատույցների փոխանցումը տեղի է ունենում նավահանգստում ապրանքները նավ բեռնելուց հետո:

Խմբի պղնձի վաճառքի պայմանագրերը սովորաբար նախատեսում են պայմանական վճարումներ, ինչպես նշված է անհատական վաճառքի պայմանագրերում՝ հիմք ընդունելով նմուշների հետազոտության նախնական արդյունքները և մետաղի նախորդ ժամանակաշրջանների գնանշված գները: Վերջնահաշվարկը կատարվում է ելնելով մետաղի շուկայական գներից, որոնք միջինացված են գնանշման որոշակի ապագա ժամանակաշրջանի համար: Որպես կանոն, պղնձի համար գնանշման ապագա ժամանակաշրջանը կազմում է մինչև երկու ամիս՝ գնորդին ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերը և հատույցները փոխանցելուց հետո:

Խմբի պայմանականորեն գնանշվող վաճառքի պայմանագրերը ներառում են պարունակվող ածանցյալ գործիքներ, որոնք, ապրանքի վաճառքին առնչություն չունենալու պատճառով, պետք է առանձնացվեն հիմնական պայմանագրից՝ հաշվապահական հաշվառման նպատակների համար: Պարունակվող ֆինանսական գործիքը, որն իրենից ներկայացնում է ապագա գնի վրա հիմնված վերջնական հաշվարկային գինը, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում գրանցվում է որպես դեբիտորական պարտք կամ ստացված կանխավճար և յուրաքանչյուր ժամանակաշրջանում վերագնահատվում է (իրական արժեք) հասույթի միջոցով՝ հաշվի առնելով ապրանքի ֆորվարդային կորը մինչև վերջնահաշվարկի ամսաթիվը:

**(ii) Ծառայություններ**

Մատուցված ծառայություններից ստացված հասույթը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվետու ամսաթվի դրությամբ գործարքի ավարտման աստիճանի չափով: Գործարքի ավարտման աստիճանը գնահատվում է ելնելով կատարված աշխատանքի ուսումնասիրության արդյունքներից:

**(iii) Պետական շնորհներ**

Պետական շնորհները սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, երբ առկա է հիմնավորված երաշխիք, որ դրանք կստացվեն և Խումբը կկատարի դրանց հետ կապված պայմանները: Շնորհները, որոնք փոխհատուցում են Խմբի ծախսերը, ճանաչվում են շահույթում կամ վնասում կանոնավոր հիմունքով՝ այն նույն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում ճանաչվել են համապատասխան ծախսերը: Շնորհները, որոնք փոխհատուցում են ակտիվի սկզբնական արժեքը, կանոնավոր կերպով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

**(h) Այլ ծախսեր**

**(i) Վարձակալության գծով վճարներ**

Գործառնական վարձակալության գծով կատարված վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսիչ գումարները ճանաչվում են որպես վարձակալության գծով կատարած ընդհանուր վճարների բաղկացուցիչ մաս՝ վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

Ֆինանսական վարձակալության գծով կատարած նվազագույն վարձավճարները բաշխվում են ֆինանսական վճարի և չվճարված պարտավորության նվազեցման միջև: Ֆինանսական վճարը վարձակալության ժամկետի ընթացքում ըստ ժամանակաշրջանների բաշխվում է այնպես, որպեսզի ստացվի հաստատուն պարբերական տոկոսադրույք յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ:

Պայմանական վարձավճարները հաշվառվում են՝ վերանայելով նվազագույն վարձավճարները վարձակալության գործողության մնացած ժամկետի ընթացքում, երբ պայմանականության հանգամանքն այլևս առկա չէ, և հաստատվել է վարձակալության գծով ճշգրտումը:

**(ii) Սոցիալական ծախսումներ**

Այն չափով որքանով սոցիալական ծրագրերին Խմբի հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում Խմբի աշխատակիցներով, դրանք ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

**(ճ) Ֆինանսական եկամուտ և ծախսեր**

Ֆինանսական եկամուտը ներառում է ներդրումների գծով տոկոսային եկամուտը և փոխարժեքային տարբերություններից ստացված շահույթը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է շահույթում կամ վնասում հաշվեգրվելուն պես՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ֆինանսական ծախսերը ներառում են փոխառությունների գծով տոկոսային ծախսերը, փոխառությունների սկզբնական ճանաչման գծով գեղջի վերականգնումը, փոխարժեքային տարբերություններից առաջացած վնասը և ֆինանսական ակտիվների գծով ճանաչված արժեզրկումից կորուստները: Փոխառության գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի չեն որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթը և վնասը ներկայացվում են գուտ հիմունքով:

**(դ) Շահութահարկ**

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության միավորներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ եկամտում ճանաչված տարրերին:



Ընթացիկ հարկը տարվա շահութահարկի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ և ներառում է նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են օգտագործելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը՝ հիմնվելով ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների ժամանակավոր տարբերությունների վրա: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման հետ կապված այն գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա, ինչպես նաև դուստր ընկերություններում կատարած ներդրումներին վերաբերող տարբերությունների համար, այնքանով, որքանով հավանական է դրանց հակադարձումը մոտ ապագայում: Հետաձգված հարկի գումարը չափվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: Հետաձգված հարկային ակտիվները և հետաձգված հարկային պարտավորությունները հաշվանցվում են, եթե Խումբն ունի ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հետաձգված հարկային ակտիվներն ու հետաձգված հարկային պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից կամ տարբեր հարկատուներից, սակայն Խումբը մտադիր է հարկային պարտավորությունները մարել և հարկային ակտիվներն իրացնել գուտ հիմունքով կամ միաժամանակ իրացնել հարկային ակտիվներն ու մարել հարկային պարտավորությունները:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է չօգտագործված հարկային վնասների, հարկային արտոնությունների և նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով, այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց դրանք կարող են օգտագործվել: Հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ հարկային օգուտը կիրացվի:

**(Ծ) Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ**

Մի շարք նոր ստանդարտներ, այդ ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Խմբի գործունեության վրա: Խումբը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- Վերանայված ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտումներ» (2009թ.) ստանդարտը ներկայացնում է կապակցված կողմերի հետ գործարքների և դրանց մնացորդների բացահայտման հիմնական պահանջների հետ կապված բացառություն, ներառյալ պարտավորվածությունները կառավարության հետ առնչություն ունեցող կազմակերպությունների համար: Ի լրումն, ստանդարտը վերանայվել է ներկայացման որոշ պահանջներ հեշտացնելու նպատակով, որոնք նախկինում պարտադիր չէին հանդիսանում: Վերանայված ստանդարտը պետք է կիրառվի հետադարձ հիմունքով 2011թ. հունվարի 1-ին կամ դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար: Խումբը դեռևս չի որոշել այս փոփոխության հնարավոր ազդեցությունը:

- ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտը կգործի 2013թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրան հաջորդող հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը կիրառարակվի մի քանի փուլերով, և ենթադրվում է, որ կփոխարինի ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտը ծրագրի ավարտից հետո՝ մինչև 2010թ. վերջը: ՖՀՄՍ 9-ի հրապարակման առաջին փուլը, որը վերաբերում է ֆինանսական ակտիվների ճանաչմանը և չափմանը, ավարտվեց 2009թ. նոյեմբերին: Խումբն ընդունում է, որ նոր ստանդարտը նախատեսում է բազմաթիվ փոփոխություններ ֆինանսական գործիքների հաշվառման համար և հավանական է, որ էական ազդեցություն կունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա: Այս փոփոխությունների ազդեցությունը կվերլուծվի ստանդարտի հաջորդ փուլերի հրապարակմանը զուգընթաց:
- Բազմաթիվ «ՖՀՄՍ-ների բարեփոխումները» կդիտարկվեն առանձին ստանդարտների կտրվածքով: Բոլոր փոփոխությունները, որոնք հանգեցնում են ներկայացման, ճանաչման կամ չափման հետ կապված հաշվառման փոփոխությունների, ուժի մեջ կմտնեն 2010թ. հունվարի 1-ից ոչ շուտ: Խումբը դեռևս չի վերլուծել այս բարեփոխումների հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական վիճակի կամ գործունեության վրա:

#### **4 Իրական արժեքի որոշում**

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Իրական արժեքները որոշվել են չափման և բացահայտման նպատակով՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված մեթոդները: Կիրառելիության դեպքում, իրական արժեքների որոշման ժամանակ կատարած ենթադրությունների մասին լրացուցիչ տեղեկատվությունը բացահայտվում է ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրությունում:

##### **(ա) Հիմնական միջոցներ**

Գույքի շուկայական արժեքն այն գնահատված գումարն է, որով գույքը գնահատման ամսաթվի դրությամբ կարող է փոխանակվել պատրաստական գնորդի և պատրաստական վաճառողի միջև՝ «անկախ կողմերի միջև գործարքում» համապատասխան շուկայավարում կատարելուց հետո, որտեղ կողմերը գործում են իրազեկորեն, խոհեմորեն և առանց հարկադրության: Մեքենա-սարքավորումների, տնտեսական միջոցների շուկայական արժեքը հիմնված է համանման միավորների համար գնանշվող շուկայական արժեքի վրա:

Գնանշված շուկայական արժեքի բացակայության դեպքում հիմնական միջոցների իրական արժեքը հիմնականում որոշվում է՝ կիրառելով մաշեցված փոխարինման արժեքը: Այս մեթոդը դիտարկում է հիմնական միջոցների վերարտադրման կամ փոխարինման ծախսերը՝ հաշվի առնելով ֆիզիկական, ֆունկցիոնալ կամ տնտեսական մաշվածությունը կամ հնացածությունը:

##### **(բ) Ներդրումային գույք**

Ներդրումային գույքի իրական արժեքը, որը որոշվում է բացահայտման նպատակներով, գնահատվում է շուկայական արժեքի հիման վրա:

**(գ) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր ու տրված փոխառություններ**

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի ու տրված փոխառությունների իրական արժեքը գնահատվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեք: Այս իրական արժեքը որոշվում է բացահայտման նպատակներով:

**(դ) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ**

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը, որը որոշվում է բացահայտման նպատակներով, հաշվարկվում է հիմք ընդունելով մայր գումարի և տոկոսագումարների գծով դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքը՝ զեղչված հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով:

**(ե) Ածանցյալ գործիքներ**

Պղնձի խտանյութի գնմանը և սև պղնձի վաճառքին վերաբերող, հիմնական պայմանագրից առանձնացվող պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքը գնահատվում է հաշվետու ամսաթվի դրությամբ մետաղների շուկաներում գնանշված ֆորվարդային գների հիման վրա:

## 5 Հասույթ

հազ. դրամ	2009թ.	2008թ.
Հասույթ սև պղնձի վաճառքից	25,384,728	17,387,278
Հասույթ այլ արտադրանքի վաճառքից	93,151	108,842
Հասույթ մատուցված ծառայություններից	5,019	61,590
	<b>25,482,898</b>	<b>17,557,710</b>

2009թ-ին և 2008թ-ին սև պղնձի յուրաքանչյուր առաքված մասնաքանակից Խմբի կողմից ստացված հասույթի մոտավորապես 25%-ից 50%-ը վերագրելի է սև պղնձում պարունակվող ոսկուն:

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 5,916,955 հազար դրամ (2008թ-ին՝ 1,796,592 հազար դրամ) գումարով պայմանականորեն գնանշված վաճառք, որը բաղկացած էր 1,366 չոր մետրիկ տոննա սև պղնձից (2008թ-ին՝ 821 չոր մետրիկ տոննա), որի իրական արժեքը կազմում էր 6,307,392 հազար դրամ (2008թ-ին՝ 1,674,460 հազար դրամ)՝ ներառյալ պարունակվող ածանցյալ գործիքը:

Սև պղնձի վաճառքին վերաբերող պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքը հաշվարկվել է օգտագործելով մետաղների շուկայում հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված ֆորվարդային գները:

## 6 Վաճառքի ինքնարժեք

հազ. դրամ	2009թ.	2008թ.
Գնված պղնձի խտանյութ	18,555,089	13,814,394
Նյութեր և պահեստամասեր	954,550	556,941
Գազի գծով ծախսեր	563,550	859,335
Աշխատավարձ	343,984	710,969
Մաշվածություն և ամորտիզացիա	60,695	437,396
	<b>20,477,868</b>	<b>16,379,035</b>

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ 5,840,689 հազար դրամ (2008թ-ին՝ 3,527,362 հազար դրամ) գումարով պայմանականորեն գնանշված գնում, որը բաղկացած էր 8,736 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութ (2008թ-ին՝ 9,460 չոր մետրիկ տոննա), որի իրական արժեքը կազմում էր 6,182,187 հազար դրամ (2008թ-ին՝ 2,645,775 հազար դրամ)՝ ներառյալ պարունակվող ածանցյալ գործիքը:

Պղնձի խտանյութի գնմանը վերաբերող պարունակվող ածանցյալ գործիքի իրական արժեքը հաշվարկվել է օգտագործելով մետաղների շուկայում հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված ֆորվարդային գները:

## 7 Վարչական ծախսեր

հազ. դրամ	2009թ.	2008թ.
Աշխատավարձի գծով ծախսեր	237,928	468,846
Բնապահպանության վճարներ	161,191	157,797
Հարկեր, բացառությամբ շահութահարկի	56,995	275,948
Մաշվածություն	43,236	136,444
Կոմունալ և հաղորդակցության ծառայությունների ծախսեր	39,763	52,284
Պահպանման ծախսեր	31,628	82,753
Ներկայացուցչական և գործուղման ծախսեր	25,684	40,078
Բանկային ծառայությունների վճարներ	18,217	54,035
Աուդիտորական և խորհրդատվական ծառայությունների վճարներ	11,156	31,586
Տույժեր և տուգանքներ	1,992	19,815
Այլ վարչական ծախսեր	160,920	314,481
	<b>788,710</b>	<b>1,634,067</b>

2009թ. ընթացքում աշխատակիցների միջին թիվը կազմում էր 897 (2008թ-ին՝ 1,290): Աշխատակիցների միջին քանակի կրճատումը պայմանավորված է Ալավերդու հանքում և հանքաքարի մշակման գործարանում աշխատանքների դադարեցման պատճառով աշխատակիցների կրճատումով:

## 8 Արժեզրկումից կորուստ

հազ. դրամ	2009թ.	2008թ.
Փոխհատուցման ենթակա ԱԱՀ-ի գծով արժեզրկման հակադարձում (ծնթգ. 16)	174,904	356,436
Հիմնական միջոցների արժեզրկում և դուրսգրում (ծնթգ. 11)	(335,987)	(1,859,619)
Հանքարդյունաբերական գույքի արժեզրկում (ծնթգ. 13)	-	(1,162,789)
	<b>(161,083)</b>	<b>(2,665,972)</b>

## 9 Ֆինանսական եկամուտ և ծախսեր

հազ. դրամ	2009թ.	2008թ.
<b>Շահույթում կամ վնասում ճանաչված</b>		
Տոկոսային եկամուտ	7,109	58,986
Տոկոսային ծախս վարկերի և փոխառությունների գծով	(90,269)	(576,495)
Չուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	(1,691,964)	(82,646)
<b>Ֆինանսական ծախսեր</b>	<b>(1,782,233)</b>	<b>(659,141)</b>
Շահույթում կամ վնասում ճանաչված զուտ ֆինանսական ծախսեր	<b>(1,775,124)</b>	<b>(600,155)</b>

## 10 Շահութահարկի գծով ծախս

Խումբը շահութահարկը վճարում է հայկական ընկերությունների համար կիրառվող 20% դրույքով (2008թ-ին՝ 20%):

հազ. դրամ	2009թ.	2008թ.
<b>Ընթացիկ հարկի գծով ծախս</b>		
Ընթացիկ տարի	848,427	88,625
Նախորդ տարիներում պակաս ներկայացված	-	10,176
	848,427	98,801
<b>Հետաձգված հարկի գծով ծախս</b>		
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	(99,311)	(677,266)
Չճանաչված նվազեցվող ժամանակավոր տարբերությունների փոփոխություն	99,311	199,162
	-	(478,104)
	<b>848,427</b>	<b>(379,303)</b>

## Ուղղակիորեն այլ համապարփակ եկամտում ճանաչված շահութահարկ

հազ. դրամ	2009թ.			2008թ.		
	Մինչև հարկումը	Հարկում	Առանց հարկման հետևանքների	Մինչև հարկումը	Հարկում	Առանց հարկման հետևանքների
Հիմնական միջոցների արժեզրկումից կորուստ	-	-	-	(5,143,914)	1,028,819	(4,115,095)

**Արդյունավետ հարկային դրույքի համադրում**

	2009թ.		2008թ.	
	հազ, դրամ	%	հազ, դրամ	%
Շահույթ/(վնաս) մինչև շահութահարկով հարկումը	2,112,790	100.0	(3,873,531)	100.0
Շահութահարկ՝ հաշվարկված կիրառելի հարկային դրույքով	422,558	20.0	(387,353)	10.0
Ավելի ցածր դրույքով հակադարձված հետաձգված հարկերի հետևանքները	-	-	(169,740)	4.4
Չնվազեցվող/(չհարկվող) հոդվածներ	326,558	15.5	(31,548)	0.8
Չճանաչված հետաձգված հարկային ակտիվների վոլիտիություն	99,311	4.7	199,162	(5.1)
Նախորդ տարիներում պակաս ներկայացված	-	-	10,176	(0.3)
	<b>848,427</b>	<b>40.2</b>	<b>(379,303)</b>	<b>9.8</b>

## 11 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	<u>Հոդ և շենքեր</u>	<u>Մեքենա- սարքավ.</u>	<u>Փոխադրա- միջոցներ</u>	<u>Տնտեսակ. գույք</u>	<u>Անավարտ շինարարութ.</u>	<u>Ընդամենը</u>
<b>Սկզբնական արժեք/ Վերագնահատված արժեք</b>						
Մնացորդը առ 1 հունվարի 2008թ.	3,871,338	4,866,597	501,773	195,971	949,713	10,385,392
Ավելացումներ	80,014	1,736,260	8,453	103,978	1,405,212	3,333,917
Օտարումներ/դուրսգրումներ	(9,545)	(269,724)	(1,380)	(3,422)	(3,390)	(287,461)
Փոխանցում ներդրումային գույք	(236,384)	(49,551)	-	-	-	(285,935)
Փոխանցումներ	158,305	10,389	-	3,905	(172,599)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008թ.	<u>3,863,728</u>	<u>6,293,971</u>	<u>508,846</u>	<u>300,432</u>	<u>2,178,936</u>	<u>13,145,913</u>
Մնացորդը առ 1 հունվարի 2009թ.	3,863,728	6,293,971	508,846	300,432	2,178,936	13,145,913
Ավելացումներ	137,434	672,809	14,023	62,465	1,908,107	2,794,838
Փոխանցում ներդրումային գույքից	291,812	-	-	-	-	291,812
Օտարումներ/դուրսգրումներ	-	(16,042)	-	(3,285)	-	(19,327)
Փոխանցումներ	4,148	-	-	-	(4,148)	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.	<u>4,297,122</u>	<u>6,950,738</u>	<u>522,869</u>	<u>359,612</u>	<u>4,082,895</u>	<u>16,213,236</u>
<b>Մաշվածություն և արժեզրկումից կորուստներ</b>						
Մնացորդը առ 1 հունվարի 2008թ.	97,045	303,491	46,008	30,648	-	477,192
Տարվա մաշվածության ծախս	75,618	540,272	46,553	40,867	-	703,310
Փոխանցում ներդրումային գույք	(8,258)	(1,681)	-	-	-	(9,939)
Արժեզրկումից կորուստ	2,989,365	3,290,016	116,016	183,115	168,508	6,747,020
Օտարումներ/դուրսգրումներ	(300)	(8,953)	-	-	-	(9,253)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2008թ.	<u>3,153,470</u>	<u>4,123,145</u>	<u>208,577</u>	<u>254,630</u>	<u>168,508</u>	<u>7,908,330</u>
Մնացորդը առ 1 հունվարի 2009թ.	3,153,470	4,123,145	208,577	254,630	168,508	7,908,330
Տարվա մաշվածության ծախս	15,666	170,697	28,217	24,843	-	239,423
Փոխանցում ներդրումային գույքից	15,815	-	-	-	-	15,815
Արժեզրկում	-	335,987	-	-	-	335,987
Օտարումներ/դուրսգրումներ	-	(1,106)	-	(1,206)	-	(2,312)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2009թ.	<u>3,184,951</u>	<u>4,628,723</u>	<u>236,794</u>	<u>278,267</u>	<u>168,508</u>	<u>8,497,243</u>
<b>Հաշվեկշռային արժեք</b>						
Առ 1 հունվարի 2008թ.	<u>3,774,293</u>	<u>4,563,106</u>	<u>455,765</u>	<u>165,323</u>	<u>949,713</u>	<u>9,908,200</u>
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	<u>710,258</u>	<u>2,170,826</u>	<u>300,269</u>	<u>45,802</u>	<u>2,010,428</u>	<u>5,237,583</u>
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	<u>1,112,171</u>	<u>2,322,015</u>	<u>286,075</u>	<u>81,345</u>	<u>3,914,387</u>	<u>7,715,993</u>
<b>Չուտ հաշվեկշռային արժեք, եթե վերագնահատում չիրականացվեր</b>						
Առ 1 հունվարի 2008թ.	<u>489,594</u>	<u>1,750,537</u>	<u>175,105</u>	<u>73,762</u>	<u>949,713</u>	<u>3,438,711</u>
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	<u>389,496</u>	<u>1,460,548</u>	<u>200,814</u>	<u>45,802</u>	<u>2,010,428</u>	<u>4,107,088</u>
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	<u>507,978</u>	<u>1,868,494</u>	<u>188,835</u>	<u>81,345</u>	<u>3,914,387</u>	<u>6,561,039</u>



**(ա) Մաշվածություն**

60,695 հազար դրամ գումարով մաշվածության ծախսը (2008թ-ին՝ 437,396 հազար դրամ) գրանցվել էր վաճառված ապրանքների ինքնարժեքի կազմում, 135,492 հազար դրամը (2008թ-ին՝ 129,470 հազար դրամ)՝ հիմնական միջոցների և հանքարդյունաբերական գույքի գծով կապիտալ ծախսումների կազմում և 43,236 հազար դրամը (2008թ-ին՝ 136,444 հազար դրամ)՝ վարչական ծախսերի կազմում:

**(բ) Փոխառության ծախսումներ**

Խմբի կողմից կրած 589,684 հազար դրամ գումարով փոխառության ծախսումները ներառված են հիմնական միջոցների 2009թ.ավելացումների կազմում (2008թ-ին՝ 7,435 հազար դրամ): Միջին կապիտալացման դրույքը, որը կիրառվել է 2009թ. ընթացքում կապիտալացման ենթակա փոխառության ծախսումների գումարը որոշելու համար, կազմել է 6.2% (2008թ-ին՝ 7.6%):

**(գ) Արժեզրկում**

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պղնձի և մոլիբդենի գների անկումից հետո, Խումբը որոշել էր, որ առկա էր հիմնական միջոցների արժեզրկման հայտանիշ: Խումբը բաղկացած է երկու դրամաստեղծ միավորից՝ Ալավերդու պղնձածուլակա գործարանից և Թեղուտի հանքից:

***Ալավերդու պղնձածուլակա գործարան***

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ալավերդու պղնձածուլակա գործարանի արժեզրկման ստուգումն իրականացնելու նպատակով որոշվեց Խմբի Ալավերդու հանքի հանքարդյունաբերական գույքի և Ալավերդու հանքին ու Ալավերդու պղնձածուլակա գործարանին վերաբերող հիմնական միջոցների փոխհատուցվող գումարը 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով դրանց օգտագործման արժեքը:

Հիմնական միջոցների օգտագործման արժեքը շատ ավելի ցածր էր դրանց հաշվեկշռային արժեքից, քանի որ Խումբը մոտ ապագայում չի ակնկալում ստանալ մեծ շահույթ սև պնձի արտադրությունից ու վաճառքից: Նույնիսկ պնձի գների հետագա աճը չի հանգեցրել շահույթի ավելացմանը, ինչը պայմանավորված է մշակման ծախսերի, բնապահպանության վճարների և գազի ծախսերի զգալի ոչ բարենպաստ փոփոխություններով: Դեկավարությունը չի պլանավորում սկսել Ալավերդու հանքի շահագործումը մոտ ապագայում՝ հանքաքարի պաշարների հետ կապված անորոշության և ոչ բարենպաստ կոմերցիոն իրագործելիության պատճառով: Այդ իսկ պատճառով, Խումբը ճանաչեց արժեզրկումից կորուստ հիմնական միջոցների գծով, որը տեղաբաշխվեց դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվներին: Այնուամենայնիվ, դրամաստեղծ միավորի կազմի մեջ մտնող ակտիվների արժեքը չնվազեցվեց դրանց իրական արժեքից (հանած վաճառքի կազմակերպման ծախսերը), որը որոշվել էր անհատական հիմունքով:

Արժեզրկման ստուգման արդյունքում 2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը նվազեց 6,747,020 հազար դրամով: Մեփական կապիտալում ճանաչվեց 4,115,095 հազար դրամ գումարով վերագնահատման արդյունքում առաջացած նվազում (առանց 1,028,819 հազար դրամ գումարով հետաձգված հարկի)՝ հակադարձելով նախորդ վերագնահատման արդյունքում առաջացած աճը, իսկ շահույթում կամ վնասում ճանաչվեց 1,603,106 հազար դրամ գումարով վերագնահատման արդյունքում առաջացած նվազում՝ միաժամանակ ճանաչելով 256,513 հազար դրամ գումարով արժեզրկումից կորուստ 2008թ-ին դրույթ գրված հիմնական միջոցների գծով:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը որոշեց, որ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գնահատված օգտագործման արժեքն էականորեն չի փոխվել 2008թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ:

2009թ-ին Խումբը Ալավերդու պղնձաձուլական գործարանի համար ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունից ձեռք բերեց մասնագիտացված սարքավորումներ՝ 469,387 հազար դրամ արժեքով: 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ սարքավորումների իրական արժեքը՝ հանած վաճառքի կազմակերպման ծախսերը, որը որոշվել էր մետաղի թափոնի արժեքի հիման վրա, կազմեց 133,400 հազար դրամ, և ղեկավարությունը ճանաչեց 335,987 հազար դրամ գումարով արժեզրկում այն սարքավորումների գծով:

***Թեղուտի հանք***

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Թեղուտի հանքի արժեզրկման ստուգումն իրականացնելու նպատակով՝ Խումբը գնահատեց Թեղուտի հանքին վերաբերող հիմնական միջոցների և հանքարդյունաբերական գույքի փոխհատուցվող գումարը՝ հիմք ընդունելով դրանց օգտագործման արժեքը: Արժեզրկման ստուգման արդյունքում սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում արժեզրկումից կորուստ չճանաչվեց: Գնահատմամբ 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արժեզրկման հայտանիշներ չկային, ինչը պայմանավորված է պղնձի և մոլիբդենի գների աճով 2009թ-ին:

**12 Ներդրումային գույք**

	<b>հազ. դրամ</b>
<b><i>Սկզբնական արժեք</i></b>	
Առ 1 հունվարի 2008թ.	152,387
Ավելացումներ	9,971
Փոխանցում հիմնական միջոցներից	285,935
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	448,293
Փոխանցում հիմնական միջոցներ	17,500
Ավելացումներ	(291,812)
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	173,981
 <b><i>Մաշվածություն</i></b>	
Առ 1 հունվարի 2008թ.	6,778
Տարվա մաշվածության ծախս	2,926
Փոխանցում հիմնական միջոցներից	9,939
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	19,643
Փոխանցում հիմնական միջոցներ	8,743
Տարվա մաշվածության ծախս	(15,815)
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	12,571
 <b><i>Զուտ հաշվեկշռային արժեք</i></b>	
Առ 1 հունվարի 2008թ.	145,609
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	428,650
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	161,410

Ներդրումային գույքն իրենից ներկայացնում է հիմնական միջոցներից վերադասակարգված հողատարածքը և շենքերը: Որպես ներդրումային գույք վարձով տրված շենքերի մեծամասնությունը ձեռք է բերվել 2004թ-ին: Չեռքբերման ամսաթվից հետո շենքերի իրական արժեքներն էականորեն չեն փոխվել, այդ իսկ պատճառով, ներդրումային գույքի իրական արժեքն էականորեն չի տարբերվում դրա սկզբնական արժեքից:

### 13 Հանքարդյունաբերական գույք

հազ. դրամ	Ավավերդու հանք	Թեղուտի հանք	Ընդամենը
<b><i>Սկզբնական արժեք</i></b>			
Առ 1 հունվարի 2008թ.	1,137,267	-	1,137,267
Ավելացումներ/վերադասակարգումներ	333,260	2,717,785	3,051,045
Օտարումներ	(666)	-	(666)
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	1,469,861	2,717,785	4,187,646
Ավելացումներ	-	4,664	4,664
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	1,469,861	2,722,449	4,192,310
<b><i>Կուտակված ամորտիզացիա և արժեզրկումից կորուստներ</i></b>			
Առ 1 հունվարի 2008թ.	192,955	-	192,955
Տարվա մաշվածության ծախս	114,117	-	114,117
Արժեզրկումից կորուստ	1,162,789	-	1,162,789
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	1,469,861	-	1,469,861
Տարվա մաշվածության ծախս	-	-	-
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	1,469,861	-	1,469,861
<b><i>Չուտ հաշվեկշռային արժեք</i></b>			
Առ 1 հունվարի 2008թ.	944,312	-	944,312
Առ 31 դեկտեմբերի 2008թ.	-	2,717,785	2,717,785
Առ 31 դեկտեմբերի 2009թ.	-	2,722,449	2,722,449

## 14 Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով

հազ. դրամ	2009թ.	2008թ.
Կանխավճար աղացի գնման համար	2,965,219	2,724,021
Այլ կանխավճարներ	186,337	159,764
	<b>3,151,556</b>	<b>2,883,785</b>

Թեղուտի հանքի համար աղացի գնման համար 2,965,219 հազար դրամ գումարով (2008թ-ին՝ 2,724,021 հազար դրամ) կատարած կանխավճարը ներառված է ոչ ընթացիկ ակտիվների գծով կատարած կանխավճարների կազմում: Համաձայն պայմանագրի աղացի տրամադրման վերջնական ժամկետը 2011թ-ն է: «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ից ստացվող ֆինանսավորման հետաձգման արդյունքում (տես՝ ծանոթագրություն 2(դ)), 2009թ-ին Խումբը սկսեց բանակցություններ վարել աղացի առք ու վաճառքի պայմանագրի պայմանների կատարման ժամանակավոր դադարեցման շուրջ՝ մինչև որ Խումբը ձեռք կբերի բավարար ֆինանսավորում պայմանագրային գնի վճարումները շարունակելու համար: Առք ու վաճառքի պայմանագրի պայմանների համաձայն Խումբը կարող է հետ չստանալ կատարած կանխավճարի էական մասը, եթե ի վիճակի չլինի շարունակել վճարումներն ըստ սկզբնական պայմանագրի պայմանների, ինչը կախված է ֆինանսավորման ձեռքբերումից: 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կանխավճարի գծով արժեզրկում չի ճանաչվել, քանի որ ղեկավարությունն ակնկալում է ստանալ ֆինանսավորում «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ի կողմից և շարունակել առք ու վաճառքի պայմանագրով ստանձնած պարտականությունների կատարումը:

## 15 Պաշարներ

հազ. դրամ	2009թ.	2008թ.
Հումք և պահեստամասեր	3,382,424	2,241,756
Պատրաստի արտադրանք	1,165,138	716,313
Անավարտ արտադրություն	1,717	30,338
Այլ պաշարներ	196,477	48,194
	<b>4,745,756</b>	<b>3,036,601</b>

## 16 Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազ. դրամ	2009թ.	2008թ.
<b>Ոչ ընթացիկ</b>		
Փոխհատուցելի ԱԱՀ	657,888	472,012
	<b>657,888</b>	<b>472,012</b>
<b>Ընթացիկ</b>		
Առևտրական դեբիտորական պարտքեր	3,253,915	545,233
Փոխհատուցելի ԱԱՀ	1,917,963	1,356,577
Կանխավճարներ	102,574	-
Կանխավճարներ պայմանականորեն գնանշված գնումների գծով	-	2,814,097
Այլ դեբիտորական պարտքեր	33,064	79,420
	5,307,516	4,795,327
Արժեզրկման պահուստ փոխհատուցելի ԱԱՀ-ի գծով	(187,990)	(187,990)
	<b>5,119,526</b>	<b>4,607,337</b>

### *Փոխհատուցելի ԱԱՀ-ի գծով արժեզրկման պահուստի շարժի վերլուծություն*

հազ. դրամ	2009թ.	2008թ.
Տարեսկզբի դրությամբ	187,990	544,426
Դուրս գրված պահուստի վերականգնում	174,904	-
Պահուստի նվազում	(174,904)	(356,436)
	<b>187,990</b>	<b>187,990</b>

Խմբի ենթարկվածությունը վարկային և արտարժույթի ռիսկերին, ինչպես նաև առևտրական և այլ դեբիտորական պարտքերին վերաբերող արժեզրկումից կորուստները ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

## 17 Կանխավճարի տեսքով կատարած ֆինանսական ծախսեր

2008թ-ին Խումբը «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ին վճարել է կանխավճար համաձայն 2008թ-ին կնքված վարկային պայմանագրի (տես՝ ծանոթագրություն 2(դ)): Վճարված ընդհանուր գումարը ճանաչվել է որպես կանխավճարի տեսքով կատարած ֆինանսական ծախս:

## 18 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազ. դրամ	2009թ.	2008թ.
Կանխիկը դրամարկղում	2,408	1,177
Ընթացիկ հաշիվներ և ցահանջ ավանդներ	1,119,462	18,143
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում արտացոլված դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	<b>1,121,870</b>	<b>19,320</b>

Խմբի ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին և ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների զգայունության վերլուծությունը ներկայացված են ծանոթագրություն 24-ում:

## 19 Սեփական կապիտալ

### (ա) Բաժնետիրական կապիտալ

2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված և ամբողջովին վճարված բաժնետիրական կապիտալը բաղկացած էր 3,069,716 (31 դեկտեմբերի 2008թ.` 3,069,716) սովորական բաժնետոմսից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ արժեքով:

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս - մեկ ձայն սկզբունքով:

### (բ) Ծախսաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով, բացառությամբ ծանոթագրություն 19(գ) ծանոթագրությունում ներկայացված չբաշխված շահույթի գծով սահմանափակումների: 2009թ-ին և 2008թ-ին շահաբաժիններ չեն հայտարարվել և չեն վճարվել: 2009թ. դեկտեմբերի 31-ից հետո շահաբաժիններ չեն առաջարկվել:

### (գ) Չբաշխված շահույթի գծով սահմանափակումներ

Համաձայն իրավական պահանջների և Ընկերության կանոնադրության Ընկերությունը պարտավոր է ստեղծել պահուստ իր չբաշխված շահույթից իր բաժնետիրական կապիտալի 15% չափով՝ ապագա վնասները ծածկելու համար: 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն իր չբաշխված շահույթից 460,457 հազար դրամ գումարը (2008թ-ին՝ 460,457 հազար դրամ) տեխարաշխել էր որպես պահուստավորված չբաշխված շահույթ՝ վերը նշված պահանջը բավարարելու համար:

## 20 Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն ամորտիզացված արժեքով չափվող Խճբի տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Խճբի ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 24-ում:

հազ. դրամ	2009թ.	2008թ.
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		
Գ-րավով ապահովված բանկային վարկեր	5,432,169	6,709,719
	<b>5,432,169</b>	<b>6,709,719</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>		
Գ-րավով չապահովված փոխառություն կապակցված կողմից	4,401,490	777,981
Գ-րավով ապահովված բանկային վարկեր	2,834,175	2,300,475
Գ-րավով չապահովված պարտատոմսերի թողարկում	-	500,000
	<b>7,235,665</b>	<b>3,578,456</b>

### (ա) Պարտքերի մարման պայմանները և ժամանակացույցը

Ստորև ներկայացված են չմարված վարկերի համար գործող պայմանները:

հազ. դրամ	Արժույթ	Անվանակ. տոկոսադր.	Մարման տարի	31 դեկտեմբերի 2009թ.		31 դեկտեմբերի 2008թ.	
				Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք	Անվանակ. արժեք	Հաշվեկշռ. արժեք
Գ-րավով ապահովված բանկային վարկ 1	ԱՄՆ դոլար	LIBOR+4%	2010թ.	2,597,994	2,597,994	4,409,244	4,409,244
Գ-րավով ապահովված բանկային վարկ 2	ԱՄՆ դոլար	LIBOR+7%	2012թ.	5,668,350	5,668,350	4,600,950	4,600,950
Գ-րավով չապահովված պարտատոմսերի թողարկում	ՀՀ դրամ	10%	2009թ.	-	-	500,000	500,000
Գ-րավով չապահովված փոխառություն կապակցված կողմից	ՀՀ դրամ	5%	Յպահանջ	4,401,490	4,401,490	777,981	777,981
				<b>12,667,834</b>	<b>12,667,834</b>	<b>10,288,175</b>	<b>10,288,175</b>

Գ-րավով ապահովված բանկային վարկ 2-ը տրամադրվել էր որպես միջանկյալ վարկ, «Թեդուտ» ՓԲԸ-ի համար ենթակառուցվածքների հետ կապված աշխատանքները և սարքավորումների ձեռքբերումը ֆինանսավորելու նպատակով, մինչև որ «Թեդուտ» ՓԲԸ-ն կատանա վարկը «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ից (տես՝ ծանոթագրություն 2(դ)): Եթե «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ն չտրամադրի վարկը մինչև 2010թ. դեկտեմբերի ամիսը, ապա գրավով ապահովված բանկային վարկ 2-ը կդառնա մարման ենթակա 2010թ. դեկտեմբերից՝ 24 հավասար ամսական մասնաբաժիններով: Եթե վարկի մարման ժամանակահատվածում կատարվի «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ից ստացված վարկի առաջին օգտագործումը, ապա գրավով ապահովված բանկային վարկ 2-ի մնացորդային մայր գումարը պետք է ամբողջովին մարվի՝ վարկի առաջին անգամ օգտագործման ամսաթվի դրությամբ:

Խումբը «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ին է տրամադրել հետևյալ երաշխիքները Գրավով ապահովված բանկային վարկ 1-ի և 2-ի գծով.

- «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ի մայր ընկերության՝ «Վալլեքս Ֆ.Մ. Իսթերլիշմենթ»-ի կողմից տրամադրված երաշխիքը:
- «Արմենիան Քափրը Փրոգրամ» ՓԲԸ-ի 100% դուստր ընկերության՝ «Թեդուտ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված երաշխիքը:
- Գրավադրվել է Ընկերության բանկային հաշիվը, որի միջոցով փոխանցվում է սև պղնձի վաճառքից ստացված հասույթը:
- 2006թ. դեկտեմբերի 8-ին հիմնական պատվիրատուի՝ Aurubis AG հետ ստորագրված վաճառքի պայմանագրով Ընկերությանը տրված բոլոր իրավունքները և օգուտները:

## 21 Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազ. դրամ	2009թ.	2008թ.
Առևտրական կրեդիտորական պարտքեր	2,194,981	517,789
Հարկեր, բացառությամբ վճարվելիք շահութահարկի	114,960	131,246
Այլ կրեդիտորական պարտքեր	87,675	127,575
Ստացված կանխավճարներ	26,442	12,630
	<b>2,424,058</b>	<b>789,240</b>

Խմբի ենթարկվածությունն արտարժույթի ու իրացվելիության ռիսկերին առևտրական և այլ կրեդիտորական պարտքերի հետ կապված ներկայացված է ծանոթագրություն 24-ում:

## 22 Պահուստներ

հազ. դրամ	Անտառների վերականգնում
Մնացորդը տարեկզբին	52,408
Տարվա ընթացքում ձևավորված պահուստներ	34,073
Տարվա ընթացքում օգտագործված պահուստներ	(38,195)
Մնացորդը տարեվերջին	<b>48,286</b>
<i>Ոչ ընթացիկ</i>	-
<i>Ընթացիկ</i>	48,286
	<b>48,286</b>

2008թ-ին Խումբը համաձայնության է եկել ՀՀ կառավարության հետ և համաձայնեցրել է ծառատունկի ժամկետները, որոնք պետք է փոխարինեն հանքի շահագործման նախապատրաստական աշխատանքների և գործարանի կառուցման ժամանակ կտրված ծառերն այլ տարածքներում: Հաշվետու ամսաթվի դրությամբ իր պարտավորությունը գնահատելիս Խումբը դիտարկել է կտրված ծառերի ընդհանուր տարածքը, կտրված ծառերի և տնկման ենթակա ծառերի կառավարության հետ համաձայնեցված տարածքների հարաբերակցությունը, աշխատանքների համաձայնեցված ժամկետները և մոտավոր ծախսերը: Ծառատունկի տարածքի միավորի արժեքը գնահատելիս Խումբը դիտարկել է 2009թ. ընթացքում ծառատունկի համար կնքված պայմանագրերի փաստացի գները:



## 23 Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

### (ա) Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին.

հազ. դրամ	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ գումարը	
	2009թ.	2008թ.	2009թ.	2008թ.	2009թ.	2008թ.
Հիմնական միջոցներ և ներդրումային գույք	21,884	42,882	(20,242)	(41,548)	1,642	1,334
Հանքարդյունաբերական գույք	207,813	207,813	-	-	207,813	207,813
Ոչ նյութական ակտիվներ	14,000	14,000	-	-	14,000	14,000
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	7,836	7,836	-	-	7,836	7,836
Պաշարներ	90,855	-	-	(70,123)	90,855	(70,123)
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	138,111	167,496	(105,947)	-	32,164	167,496
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	68,300	-	-	-	68,300	-
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնասներ	5,057	-	-	-	5,057	-
Չճանաչված հարկային ակտիվներ	(427,667)	(328,356)	-	-	(427,667)	(328,356)
Հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	126,189	111,671	(126,189)	(111,671)	-	-
Հարկի հաշվանցում	(126,189)	(111,671)	126,189	111,671	-	-
Զուտ հարկային ակտիվներ/ (պարտավորություններ)	-	-	-	-	-	-

Այս հոդվածների գծով հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել, քանի որ անորոշ է, թե արդյոք առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց Խումբը կկարողանա իրացնել այդ հոդվածներից ստացված օգուտը:

**(բ) Ժամանակավոր տարբերությունների շարժը տարվա ընթացքում**

հազ. դրամ	1 հունվարի 2008թ.	Եկամտում ճանաչված	Սեփական կապիտալ- ճանաչված	31 դեկտեմբերի 2008թ.	Եկամտում ճանաչված	31 դեկտեմբերի 2009թ.
Հիմնական միջոցներ և ներդրումային գույք	(1,413,286)	385,801	1,028,819	1,334	308	1,642
Հանքարդյունաբերական գույք	37,991	169,822	-	207,813	-	207,813
Ոչ նյութական ակտիվներ	4,629	9,371	-	14,000	-	14,000
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	7,836	-	-	7,836	-	7,836
Պաշարներ	68,506	(138,629)	-	(70,123)	160,978	90,855
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	(36,247)	203,743	-	167,496	(135,332)	32,164
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(176,352)	176,352	-	-	68,300	68,300
Հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնասներ	-	-	-	-	5,057	5,057
Չճանաչված հարկային ակտիվներ	-	(328,356)	-	(328,356)	(99,311)	(427,667)
	<b>(1,506,923)</b>	<b>478,104</b>	<b>1,028,819</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>

**24 Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում**

**(ա) Անփութի ներկայացում**

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Խումբն ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- վարկային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Խմբի ենթարկվածության մասին, ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Խմբի նպատակները, քաղաքականությունը և գործընթացները, ինչպես նաև կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Խմբի մոտեցումը: Սույն համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումները:

**Ռիսկերի կառավարման հիմունքներ**

Խումբը մշակել է Ռիսկերի կառավարման քաղաքականություն, որը նպատակ ունի ապահովել Խմբի կենսունակությունը և գործունեության առավելագույն արդյունավետություն երկարաժամկետ հատվածում: Խմբի ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Խումբը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակներն ու դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին:

**(բ) Վարկային ռիսկ**

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Խմբի նկատմամբ: Վարկային ռիսկն առաջանում է հիմնականում պատվիրատուներից ստացման ենթակա դեբիտորական պարտքերի գծով:

**(i) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր**

Խմբի և գնորդների հետ հարաբերություններում դեբիտորական պարտքերի հետ կապված հնարավոր ռիսկերը կառավարելու նպատակով կիրառվում են անհատական մոտեցումներ: Խումբն ունի իր արտադրանքի՝ սև պղնձի հիմնական գնորդը, որը եվրոպական շուկայում մետալուրգիական գործունեությամբ զբաղվող խոշոր կազմակերպություն է: 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի 95%-ը բաժին էր ընկնում այդ կազմակերպությանը (2008թ-ին՝ 77%): Վերջին չորս տարիների ընթացքում նշված գնորդին է վաճառվում տարեկան արտադրանքի ավելի քան 90%-ը: Այս առևտրային գործընկերոջ հետ հարաբերություններում Խումբը ստանում է առաքված արտադրանքի արժեքի 95%-ի չափով կանխավճար՝ առաքումից 4-5 օր հետո: Առաքված արտադրանքի արժեքի մնացած 5%-ը Խումբը ստանում է ապրանքը գնորդին հասցնելուց անմիջապես հետո: Երբ Խումբը որոշում է արտադրանքը վաճառել այլ գնորդներին, ապա, որպես կանոն, առաքումը կատարվում է վաճառվող արտադրանքի ամբողջ արժեքի չափով կանխավճարի դիմաց: Հետևաբար, հիմնական արտադրանքի վաճառքի գծով դեբիտորական պարտքերի հետ կապված էական ռիսկեր չեն առաջանում:

Խումբը չի պահանջում գրավ առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով:

Խումբը ձևավորում է պահուստ արժեզրկման գծով, որն իրենից ներկայացնում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով կրած վնասների Խմբի գնահատականը: Այս պահուստի հիմնական տարրերն են հատուկ վնասի տարրը, որը վերաբերում է անհատական հիմունքով ռիսկի զգալի գործոն պարունակող պարտքերին, և հավաքական վնասի տարրը, որը սահմանվում է մնանատիպ ակտիվների խմբերի համար՝ կրած սակայն դեռևս չբացահայտված վնասի հետ կապված: Հավաքական վնասի գծով պահուստը որոշվում է մնանատիպ ֆինանսական ակտիվների գծով կատարած վճարումների վերաբերյալ նախկին տարիների տվյալների հիման վրա:

**(i) Տրված փոխառություններ**

Խմբի քաղաքականության համաձայն փոխառությունները կարող են տրամադրվել միայն կապակցված կողմերին:

**(ii) Ենթարկվածությունը վարկային ռիսկին**

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է վարկային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափը: Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

<b>հազ. դրամ</b>	<b>Հաշվեկշռային արժեք</b>	
	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Տրված փոխառություններ	59,952	49,769
Առևտրական դեբիտորական պարտքեր	3,253,915	545,233
Կանխավճարներ պայմանականորեն գնանշված գնումների գծով	-	2,814,097
Այլ դեբիտորական պարտքեր	33,064	79,420
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,119,462	18,143
	<b>4,466,393</b>	<b>3,506,662</b>

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ աշխարհագրական տարածաշրջանների:

<b>հազ. դրամ</b>	<b>Հաշվեկշռային արժեք</b>	
	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Եվրոյի գոտու երկրներ	3,105,518	456,539
Տեղական	148,397	88,694
	<b>3,253,915</b>	<b>545,233</b>

Ստորև ներկայացված է հաշվետու ամսաթվի դրությամբ առևտրական դեբիտորական պարտքերի գծով վարկային ռիսկին առավելագույն ենթարկվածությունն ըստ հաճախորդների տեսակների:

<b>հազ. դրամ</b>	<b>Հաշվեկշռային արժեք</b>	
	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Մեծածախ առևտրով զբաղվող հաճախորդներ	3,105,518	456,539
Վերջնական օգտագործողներ	148,397	88,694
	<b>3,253,915</b>	<b>545,233</b>

Խմբի ֆինանսական ակտիվներն արժեզրկված կամ ժամկետանց չեն: Դրամական միջոցները և դրանց համարժեքները պահվում են 5 խոշոր հայկական բանկերում: Հիմք ընդունելով նախորդ ժամանակաշրջանների տվյալների հիման վրա գնահատված պարտականությունների չկատարման հնարավորության չափը՝ Խումբը գտնում է, որ չկա անհրաժեշտություն ձևավորել պահուստ ֆինանսական ակտիվների գծով:

**(գ) Իրացվելիության ռիսկ**

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Խումբը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Խմբի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման մոտեցումն է մշտապես ապահովել հնարավորինս բավարար իրացվելիություն պահանջվող ժամկետներում պարտավորությունները մարելու համար՝ թե սովորական, թե արտասովոր պայմաններում՝ առանց անընդունելի վնասների հանգեցնելու կամ Խմբի համբավը վտանգի ենթարկելու:

Այս նպատակով Խումբը կատարում է դրամական միջոցների հոսքերի կարճաժամկետ կանխատեսումներ՝ ելնելով գործառնական և ներդրումային գործունեության բնույթով պայմանավորված ֆինանսավորման պահանջներից: Որպես կանոն նշված պահանջները կանխատեսվում են տարեկան և ամսական կտրվածքով: Առաջացող ֆինանսավորման պահանջների կառավարման նպատակով՝ Խումբը մյուս անդամ ընկերությունների հետ կնքում է փոխադարձ փոխառություններ տրամադրելու պայմանագրեր, որոնք թույլ են տալիս առանց ժամանակային դժվարությունների ֆինանսավորել Խմբի կարճաժամկետ ֆինանսական պահանջները:

Իրացվելիության պահանջները բավարարելու նպատակով՝ Խումբը, բացի մյուս անդամ ընկերությունների փոխառություններից, օգտագործում է նաև բանկերից ստացված կարճաժամկետ ֆինանսավորումը:

Ստորև ներկայացված է ֆինանսական պարտավորությունների պայմանագրային ժամկետայնությունը, ներառյալ տոկոսների հաշվարկված վճարումները՝ առանց հաշվանցման համաձայնագրերի ազդեցության: Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ շատ ավելի տարբեր գումարների չափով:

*«Արմենիան Զափրր Փրոգրամ» ՓԲԸ  
2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա  
համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ*

2009թ.

հազ. դրամ	Ցպահանջ	0-6 ամիս	6-12 ամիս	1-2 տարի	2-3 տարի	3-4 տարի	Ընդամենը	Հաշվեկշռ. արժեք
<b>Ֆինանսական պարտավորություն.</b>								
Վարկեր և փոխառություններ								
Գրավով ապահովված բանկային վարկ 1	-	1,459,556	1,193,397	-	-	-	2,652,953	2,597,994
Գրավով ապահովված բանկային վարկ 2	-	204,937	441,119	3,133,042	2,691,923	-	6,471,021	5,668,350
Կապակցված կողմեր	4,401,490	-	-	-	-	-	4,401,490	4,401,490
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	2,282,656	-	-	-	-	2,282,656	2,282,656
	<b>4,401,490</b>	<b>3,947,149</b>	<b>1,634,516</b>	<b>3,133,042</b>	<b>2,691,923</b>	<b>-</b>	<b>15,808,120</b>	<b>14,950,490</b>

2008թ.

հազ. դրամ	Ցպահանջ	0-6 ամիս	6-12 ամիս	1-2 տարի	2-3 տարի	3-4 տարի	Ընդամենը	Հաշվեկշռ. արժեք
<b>Ֆինանսական պարտավորություն.</b>								
Վարկեր և փոխառություններ								
Գրավով ապահովված բանկային վարկ 1	-	1,237,409	1,211,896	2,155,544	-	-	4,604,849	4,409,244
Գրավով ապահովված բանկային վարկ 2	-	171,069	171,069	533,844	2,549,951	2,187,175	5,613,108	4,600,950
Կապակցված կողմեր	777,981	-	-	-	-	-	777,981	777,981
Գրավով չապահովված պարտատոմսերի թողարկում	-	511,806	-	-	-	-	511,806	500,000
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	-	645,364	-	-	-	-	645,364	645,364
	<b>777,981</b>	<b>2,565,648</b>	<b>1,382,965</b>	<b>2,689,388</b>	<b>2,549,951</b>	<b>2,187,175</b>	<b>12,153,108</b>	<b>10,933,539</b>

Վերը նշված աղյուսակում գրավով ապահովված բանկային վարկ 2-ի մարումները ներկայացված են ըստ պայմանագրային պայմանների: Այնուամենայնիվ, վարկի մարումը կդառնա ցպահանջ, եթե Խումբը ստանա վարկը «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ից, ինչպես ներկայացված է ծանոթագրություն 2(դ)-ում:

**(դ) Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկը Խմբի եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, ներառյալ փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և արտադրանքի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

**(i) Արտարժույթի ռիսկ**

Գործառնական գործունեությունն իրականացնելիս Խումբն ենթարկվում է արտարժույթի ռիսկին՝ ֆունկցիոնալ արժույթից (ՀՀ դրամ) տարբեր արժույթով արտահայտված վաճառքի, գնումների և փոխառությունների հետ կապված: Այս գործարքները հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Հնարավորության դեպքում, գործառնական գնումների համար վճարումները կատարվում են այն արժույթով, որով ստացվում է եկամուտը Խմբի պատրաստի արտադրանքից (այս իրավունքները սահմանվում են պայմանագրերում): Սա մասնավորապես վերաբերում է հիմնական հումքի համար կատարած վճարներին, որի գնման ծախսերը գերազանցում են Խմբի ծախսերի 90%-ը: Արտարժույթի ռիսկի նվազեցման համար կիրառվող այլ մոտեցումը նախատեսում է վարկերի ստացում այն արժույթով, որով իրացվում է Խմբի արտադրանքը (ներկայումս՝ ԱՄՆ դոլար):

**Ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին**

Ստորև ներկայացված է Խմբի ենթարկվածությունն արտարժույթի ռիսկին՝ ելնելով պայմանական գումարներից:

	ԱՄՆ դոլարով արտահայտված 2009թ.	ԱՄՆ դոլարով արտահայտված 2008թ.
<b>հազ. դրամ</b>		
<b>Ընթացիկ ակտիվներ</b>		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	707,197	12,852
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	3,157,871	3,270,636
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>		
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(1,951,272)	(48,841)
Վարկեր և փոխառություններ	(2,834,175)	(2,300,475)
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		
Վարկեր և փոխառություններ	(5,432,169)	(6,709,719)
	<b>(6,352,548)</b>	<b>(5,775,547)</b>

Տարվա ընթացքում կիրառվել են ստորև ներկայացված փոխարժեքները:

	2009թ. վերջի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը համարժեք էր	2008թ. վերջի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը համարժեք էր
ՀՀ դրամ	377.89	306.73

**Զգայունության վերլուծություն**

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի ամրապնդումը հետևյալ արտարժույթների նկատմամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Խումբը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ: Վերլուծությունն իրականացվել է նույն հիմունքով 2008թ. համար, չնայած արտարժույթի փոխարժեքների հնարավոր տատանումները տարբեր են եղել, ինչպես ներկայացված է ստորև:

<b>հազ. դրամ</b>	<b>Սեփական կապիտալ</b>	<b>Շահույթ կամ վնաս</b>
<b>2009թ.</b>		
ԱՄՆ դոլար (10% ամրապնդում)	635,255	635,255
<b>2008թ.</b>		
ԱՄՆ դոլար (20% ամրապնդում)	1,155,109	1,155,109

Դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի թուլացումը վերոնշյալ արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

**(ii) Տոկոսադրույքի ռիսկ**

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով վերջիններիս իրական արժեքը (ֆիքսված դրույքով պարտք) կամ դրանց գծով ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Դեկավարությունը չի կիրառում ֆիքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Խմբի ենթարկվածության չափը որոշող պաշտոնական քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկ կամ փոխառություն վերցնելիս դեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելիս:

**Կառուցվածքը**

Ստորև ներկայացված են հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի տոկոսակիր ֆինանսական գործիքները՝ տոկոսադրույքի կտրվածքով:

<b>հազ. դրամ</b>	<b>Հաշվեկշռային արժեք</b>	
	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
<b>Ֆիքսված դրույքով գործիքներ</b>		
Ֆինանսական ակտիվներ	59,952	49,769
Ֆինանսական պարտավորություններ	(4,401,490)	(1,277,981)
	<b>(4,341,538)</b>	<b>(1,228,212)</b>
<b>Փոփոխական դրույքով գործիքներ</b>		
Ֆինանսական պարտավորություններ	<b>(8,266,344)</b>	<b>(9,010,194)</b>



**Ֆիքսված դրույքով գործիքների իրական արժեքի զգայունության վերլուծություն**

Խումբը ֆիքսված դրույքով ֆինանսական ակտիվները և պարտավորությունները չի հաշվառում իրական արժեքով: Այդ իսկ պատճառով, հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն չեն ունենա շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի վրա:

**Փոփոխական դրույքով գործիքների գծով դրամական միջոցների հոսքերի զգայունության վերլուծություն**

Հաշվետու ամսաթվի դրությամբ տոկոսադրույքի փոփոխությունը 100 տոկոսային կետով կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Այս վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես արտարժույթի փոխարժեքները, կմնան անփոփոխ: Վերլուծությունն իրականացվել է նույն հիմունքով 2008թ. համար:

հազ. դրամ	Շահույթ կամ վնաս		Սեփական կապիտալ	
	100 տկ աճ	100 տկ նվազում	100 տկ աճ	100 տկ նվազում
<b>2009թ.</b>				
Փոփոխական դրույքով գործիքներ	(66,131)	66,131	(66,131)	66,131
<b>2008թ.</b>				
Փոփոխական դրույքով գործիքներ	(72,082)	72,082	(72,082)	72,082

**(ե) Ապրանքային գնային ռիսկ**

Խմբի ապրանքային գնային ռիսկը պայմանավորված է պղնձի և ոսկու գներով: Պղնձի և ոսկու ֆորվարդային գները հաշվետու ամսաթվի դրությամբ ազդում են պղնձի խտանյութի վաճառքին վերաբերող պարունակվող ածանցյալ գործիքների իրական արժեքի վրա: Խումբը չի հեջավորում ապրանքային գնային ռիսկին իր ենթարկվածությունը:

Խմբի արտադրանքի գները որոշվում են միջազգային շուկայում գերիշխող գների հիման վրա՝ որևէ ֆիքսված ամսաթվի դրությամբ: Հիմնական հումքի գնման և պատրաստի արտադրանքի վաճառքի միջև ընկած ժամանակային հատվածը կարող է կազմել 3-4 ամիս: Այս ռիսկերը կառավարելու նպատակով Խումբն իր արտադրանքի վաճառքի և հումքի գնման համար սահմանում է գնորոշման ժամանակահատված այնպես, որպեսզի վաճառքի ճանաչման պահը համընկնի գնված խտանյութի գնորոշման ժամկետի հետ: Կիրառելով այս մեթոդը՝ Խումբը մասնակիորեն չեզոքացնում է գնային ռիսկերը:

**Զգայունության վերլուծություն**

Պղնձի և ոսկու ֆորվարդային գների 20% աճը հաշվետու ամսաթվի դրությամբ կավելացներ (կնվազեցներ) սեփական կապիտալը և շահույթը կամ վնասը ստորև ներկայացված գումարների չափով: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները, կմնան անփոփոխ: Վերլուծությունն իրականացվել է նույն հիմունքով 2008թ. համար:

<b>հազ. դրամ</b>	<b>Սեփական կապիտալ</b>	<b>Շահույթ կամ վնաս</b>
<b>2009թ.</b>		
Վաճառք	1,009,183	1,009,183
Վաճառքի ինքնարժեք	(989,150)	(989,150)
<b>2008թ.</b>		
Վաճառք	267,914	267,914
Վաճառքի ինքնարժեք	(423,324)	(423,324)

Դեկտեմբերի 31-ի դրությամբ պղնձի և ոսկու ֆորվարդային գների 20% նվազումը կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ ելնելով այն ենթադրությունից, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

**(զ) Իրական արժեքի և հաշվեկշռային արժեքի համեմատություն**

Ղեկավարությունը գտնում է, որ Խմբի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես համապատասխանում են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Իրական արժեքի որոշման հիմունքները ներկայացված են ծանոթագրություն 4-ում:

Ստորև ներկայացված են դրամական միջոցների գնահատված հոսքերը գեղջելու համար օգտագործվող տոկոսադրույքները, որոնք, կիրառելի լինելու դեպքում, հիմնվում են հաշվետու ամսաթվի դրությամբ գործող LIBOR-ի ու համապատասխան վարկային սարքի գումարի վրա:

	<b>2009թ.</b>	<b>2008թ.</b>
Վարկեր և փոխառություններ	4.2%-7.2%	7.1%-10.1%

**(է) Իրական արժեքի հիերարխիա**

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված է իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների վերլուծությունը՝ ըստ գնահատման մեթոդի: Տարբեր մակարդակները որոշվում են հետևյալ կերպ.

- 1-ին մակարդակ. գնանշվող գներ (չճշգրտված) գործող շուկայում նմանատիպ ակտիվների կամ պարտավորությունների համար:
- 2-րդ մակարդակ. որպես մուտքային տվյալներ օգտագործվում են այն տվյալները, բացառությամբ մակարդակ 1-ում ներկայացված գնանշվող գների, որոնք դիտարկելի են ակտիվի կամ պարտավորության գծով կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ), կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության համար օգտագործվող մուտքային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի մուտքային տվյալներ):

հազ. դրամ	1-ին մակարդակ	2-րդ մակարդակ	3-րդ մակարդակ	Ընդամենը
<b>31 դեկտեմբերի 2009թ.</b>				
Վաճառքի պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ (ակտիվ)	-	390,437	-	390,437
Գնման պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ (պարտավորություն)	-	(341,498)	-	(341,498)
<b>31 դեկտեմբերի 2008թ.</b>				
Վաճառքի պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ (պարտավորություն)	-	(122,132)	-	(122,132)
Գնման պայմանագրերում պարունակվող ածանցյալ գործիքներ (ակտիվ)	-	881,587	-	881,587

**(ը) Կապիտալի կառավարում**

Խումբը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն դեկլարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝ Խմբի գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու, ինչպես նաև շուկայի վստահությունը պահպանելու համար:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Խմբի մոտեցումը չի փոփոխվել: Ընկերության և նրա դուստր ընկերությունների նկատմամբ չեն գործում կապիտալի կառավարմանը վերաբերող արտաքին պահանջներ:

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Խմբի պարտքի և կապիտալի հարաբերակցությունը կազմում էր՝

հազ. դրամ	2009թ.	2008թ.
<b>Ընդամենը պարտավորություններ</b>	<b>15,841,466</b>	<b>11,270,625</b>
Հանած՝ դրամական միջոցները և դրանց համարժեքները	(1,121,870)	(19,320)
Զուտ պարտքը	14,719,596	11,251,305
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>	<b>9,841,701</b>	<b>8,577,338</b>
Պարտքի և կապիտալի հարաբերակցությունը դեկտեմբերի 31-ի դրությամբ	1.50	1.31

**25 Պարտավորվածություններ**

**(ա) Գումների գծով պարտավորվածություններ**

Խումբը պայմանագիր է կնքել և կատարել է կանխավճար (տես՝ ծանոթագրություն 14) աղացի գնման համար 2008թ-ին: Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 47,000 հազար ԱՄՆ դոլար: Ընկերությունը կատարել է 9,674 հազար ԱՄՆ դոլար գումարով կանխավճար և 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գնման գծով պարտավորվածությունը կազմել է 37,326 հազար ԱՄՆ դոլար (31 դեկտեմբերի 2008թ.՝ 37,976 հազար դրամ): Վճարումը պետք է կատարվի և աղացը պետք է տրամադրվի Ընկերությանը մինչև 2011թ. հուլիսը:

**(բ) Հանքի շահագործմանը վերաբերող պարտավորվածություններ**

2007թ. հոկտեմբերին Խումբը Լիցենզավորման պայմանագիր է կնքել Առևտրի ու տնտեսական զարգացման նախարարության և Բնապահպանության նախարարության հետ (Իրավասու մարմիններ): Լիցենզավորման պայմանագրի համաձայն Իրավասու մարմիններն Խմբին են փոխանցում Թեղուտի պղնձամոլիբդենային հանքի 105 միլիոն տոննա չափով պաշարների (տարեկան 7 տոննա) վերահսկման և շահագործման իրավունքը մինչև 2026թ.:

Լիցենզավորման պայմանագրի և ՀՀ կառավարության հետ համաձայնեցված բնապահպանական ծրագրերի համաձայն Ընկերությունը պարտավոր է՝

- ավարտել նախապատրաստական աշխատանքները և կատարել 35,000,000 հազար դրամ գումարով ներդրումներ Թեղուտի հանքի շահագործման համար մինչև 2011թ. հուլիսը և այնուհետև սկսել հանքի շահագործումը,
- սկսած 2008թ-ից վճարել 2,953 հազար դրամ գումարով տարեկան վճար բնապահպանության հիմնադրամին,
- տնկել անտառներ հանքի և ապագա գործարանի տարածքում կտրած ծառերի փոխարեն (տես՝ ծանոթագրություն 22):

**26 Պայմանական դեպքեր**

**(ա) Ապահովագրություն**

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Խումբը չունի ամբողջական ապահովագրություն իր գործարանի և սարքավորումների համար, ինչպես նաև այն ապահովագրված չէ գործունեության ընդհատումից և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորություններից, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Խմբի տարածքում տեղի ունեցած պատահարների կամ վերջինիս գործունեության հետևանքով: Քանի դեռ Խումբը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Խմբի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

**(բ) Իրավական պարտավորություններ**

Բնականոն գործունեության ընթացքում Խումբը կարող է հանդես գալ որպես դատական գործերի, վարույթների և բողոքների կողմ: Դեկլարությունը գտնում է, որ ընդհանուր պարտավորությունը, եթե այդպիսին առաջանա նման վարույթների կամ բողոքների արդյունքում, էական ազդեցություն չի ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ ապագա գործառնությունների արդյունքների վրա:

**(գ) Հարկային պարտավորվածություններ**

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերն ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Դեկլարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

**(դ) Շրջակա միջավայրի պահպանության**

Դեկլարության կարծիքով Խմբի գործունեությունը համապատասխանում է շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերող կառավարության բոլոր պահանջներին, այդ իսկ պատճառով գտնում է, որ Խումբը չունի որևէ էական ընթացիկ պարտավորություն շրջակա միջավայրի պահպանության հետ կապված: Այնուամենայնիվ, շրջակա միջավայրի պահպանությունը կարգավորող օրենսդրությունը Հայաստանում մշակման փուլում է, և օրենսդրության ու վերջինիս մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են հիմք հանդիսանալ հետագա էական պարտավորությունների առաջացման համար:

## **27 Գործառնական ռիսկեր**

**(ա) Հանքեր**

Ըստ իրենց բնույթի հանքերը ենթակա են բազմաթիվ գործառնական ռիսկերի և գործոնների ազդեցության, որոնք, որպես կանոն, գտնվում են Խմբի վերահսկողության սահմաններից դուրս և կարող են ազդեցություն ունենալ Խմբի գործունեության, գործառնական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վրա: Այս գործառնական ռիսկերը և գործոնները ներառում են, սակայն չեն սահմանափակվում՝ (i) գրունտի և ջրի անկանխատեսելի պայմաններով և ջրօգտագործման իրավունքների հետ կապված անբարենպաստ հայցերով, (ii) երկրաբանական խնդիրներով, ներառյալ երկրաշարժերը և այլ բնական աղետները, (iii) մետալուրգիական և մշակման այլ գործընթացների հետ կապված խնդիրներով, (iv) արտասովոր եղանակային կամ գործառնական պայմաններով կամ այլ ֆորս-մաժորային իրադարձություններով, (v) հանքաքարի ակնկալվողից ցածր որակով կամ վերականգնման դրույքներով, (vi) վթարներով, (vii) կառավարության կողմից անհրաժեշտ թույլտվությունների ոչ ժամանակին կամ ընդհանրապես չտրամադրմամբ, (viii) դատական վարույթների արդյունքներով, ներառյալ ընդունված որոշումների բողոքարկմամբ, (ix) հետազոտման և մշակման աշխատանքների հետ կապված անորոշություններով, (x) փոխադրման ուշացումներով, (xi) աշխատանքային վիճաբանություններով, (xii) համապատասխան ապահովագրական փաթեթի ձեռք բերման անկարողությամբ, (xiii) նյութերի և սարքավորումների բացակայությամբ, (xiv) սարքավորումների և գործընթացների հետ կապված խափանումներով, որոնք պայմանավորված են գործունեության հատկորոշումների կամ ակնկալիքների հետ անհամապատասխանությամբ, (xv) անկանխատեսելի դժվարություններով՝ ձեռք բերված միավորումների համախմբման և ակնկալվող միասնության ձեռք բերման հետ կապված և (xvi) ֆինանսավորում ստանալու փորձերի արդյունքներով և ֆինանսական շուկայի պայմաններով:

**(բ) Պղնձի գների տատանումներ**

Խմբի ֆինանսական գործունեությունը զգալիորեն կախված է պղնձի գնից, որի վրա ազդեցություն ունեն Խմբի վերահսկողության սահմաններից դուրս գտնվող բազմաթիվ գործոններ: Պղնձի առք ու վաճառքն իրականացվում է Լոնդոնի մետաղների բորսայում (LME), Նյու Յորքի ապրանքային բորսայում (ԱԲ) և Շանհայի ֆյուչերսների բորսայում (CME): Խումբը պղնձի վաճառքն իրականացնում է LME-ում գնանշվող գներով: Պղնձի գնի վրա էական

ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ, (i) պղնձի պահանջարկը և առաջարկն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, ինդուստրիալ արտադրության միտումները և բնակարանաշինության ու ավտոմոբիլային արդյունաբերության պայմանները, որոնցից բոլորը կորրելացվում են պղնձի պահանջարկի հետ, (iii) տնտեսական աճը և քաղաքական պայմանները Չինաստանում, որը դարձել է մաքուր պղնձի աշխարհի ամենախոշոր սպառողը և այլ խոշոր զարգացող տնտեսություններում, (iv) սպեկուլյատիվ ներդրումային դիրքերը պղնձի և պղնձի ֆյուչերսների հետ կապված, (v) փոխարինող նյութերի առկայությունը և արժեքը և (vi) արտարժույթի փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը: Պղնձի շուկան բնորոշվում է փոփոխական և ցիկլային բնույթով: Պղնձի գները կտրուկ իջել են ի համեմատություն վերջին տարիների բարձր ցուցանիշների: 2009թ-ին նախորդող երեք տարիների ընթացքում LUP մեկ տոննա պղնձի գները օրվա վերջի կտրվածքով տատանվել են 2,778 -ից 8,995 ԱՄՆ դոլար: Կազմելով միջինը 7,959 ԱՄՆ դոլար մեկ տոննայի համար 2008թ. առաջին ինն ամսվա ընթացքում՝ Լոնդոնի մետաղների բորսայում (LUP) պղնձի գները նվազեցին, և 2008թ. դեկտեմբերին մեկ տոննա պղնձի գինը կազմեց 2,778 ԱՄՆ դոլար՝ վերջին չորս տարիների ընթացքում գրանցված ամենացածր ցուցանիշը: 2009թ. մարտից պղնձի գները կրկին սկսեցին աճել, և 2010թ. հուլիսի 12-ին մեկ տոննա պղնձի LUP-ի գինն օրվա վերջի կտրվածքով կազմել է 6,630 ԱՄՆ դոլար:

**(գ) Ոսկու գների տատանումներ**

Խմբի ֆինանսական գործունեությունը կախված է նաև ոսկու գնից, որի վրա ազդեցություն ունեն Խմբի վերահսկողության սահմաններից դուրս գտնվող բազմաթիվ գործոններ: Ոսկու առք ու վաճառքն իրականացվում է Լոնդոնի ձուլակտորների շուկայում, Տոկիոյի ապրանքային բորսայում, Նյու Յորքի ապրանքային բորսայում (COMEX) և Յյուրիխի Գ-ոլդ Փուլում: Ոսկու գնի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ, (i) ոսկու պահանջարկի և առաջարկի հավասարակշռությունն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, ոսկերչական ոլորտի միտումները, որոնցից բոլորը կորրելացվում են ոսկու պահանջարկի հետ, (iii) Հնդկաստանի և այլ ասիական երկրների տնտեսական աճը և քաղաքական պայմանները, որոնք դարձել են ոսկու աշխարհի ամենախոշոր սպառողները և այլ զարգացող տնտեսությունները, (iv) սպեկուլյատիվ ներդրումային դիրքերը ոսկու և ոսկու ֆյուչերսների հետ կապված և (v) փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը: Ոսկու շուկան բնորոշվում է փոփոխական բնույթով: 2009թ.-ին նախորդող երեք տարիների ընթացքում Լոնդոնի ձուլակտորների շուկայի ասոցիացիայի կողմից սահմանված մեկ ունցիա ոսկու գները օրական կտրվածքով տատանվել են 608.3-ից 1,218.25 ԱՄՆ դոլար:

**(դ) Մոլիբդենի գների տատանումներ**

Խմբի ապագա ֆինանսական գործունեությունը զգալիորեն կախված է նաև մոլիբդենի գնից: Մոլիբդենի գինը փոփոխական և ցիկլային է, նույնիսկ ավելին քան պղնձինը: Մոլիբդենի գնի վրա էական ազդեցություն ունեն բազմաթիվ գործոններ, ներառյալ, (i) մոլիբդենի պահանջարկը և առաջարկն աշխարհի մասշտաբով, (ii) համաշխարհային տնտեսության աճի տեմպերը, հատկապես շինարարության և ենթակառուցվածքների ոլորտում, որոնք պահանջում են պողպատի զգալի պաշարներ, (iii) որպես պղնձի արտադրության հավելյալ արտադրատեսակ՝ արտադրվող մոլիբդենի ծավալները, (iv) պաշարների չափերը, (v) արտարժույթի փոխարժեքի տատանումները, ներառյալ ԱՄՆ դոլարի համեմատական կայունությունը և (vi) ԱՄՆ-ի և արտերկրյա մրցակիցների արտադրական ծախսերը:

Մոլիբդենի պահանջարկը զգալիորեն կախված է համաշխարհային մասշտաբով պողպատի արդյունաբերությունից, որը այս մետաղը օգտագործում է որպես կարծրացնող և քայքայումը կանխարգելող նյութ: Մոլիբդենի արտադրության մոտավորապես 80 տոկոսը օգտագործվում է այս նպատակի համար: Մնացած պաշարներն օգտագործվում են մասնագիտացված

քիմիկատների, մասնավորապես, կատալիզատորների, ջրագերծման ռեակտիվների, քսանյութերի արտադրությունում: Մոլիբդենի համաշխարհային արտադրության մոտավորապես 65 տոկոսը հանդիսանում է պղնձի արդյունահանման հավելյալ արտադրանք, որը համեմատաբար այդքան էլ զգայուն չէ մոլիբդենի գների նկատմամբ:

## 28 Գործարքներ կապակցված կողմերի հետ

### (ա) Վերահսկողություն

Խմբի մայր ընկերությունն է Լիխտենյնշտեյնում հիմնադրված «Վալլեքս Ֆ.Մ. Իսթերլիշմենթ»-ը:

Ընկերության վերջնական վերահսկող անձն է հանդիսանում պրն. Վալերի Մեջլումյանը:

Խմբի մայր ընկերությունը, վերջնական վերահսկող անձը կամ որևէ այլ միջանկյալ վերահսկող անձ չեն ներկայացնում հանրությանը մատչելի ֆինանսական հաշվետվություններ:

### (բ) Ղեկավարության վարձատրություն

Ստորև ներկայացված է տարվա ընթացքում հիմնական ղեկավար անձնակազմի կողմից ստացված վարձատրությունը:

հազ. դրամ	2009թ.	2008թ.
Տնօրեններ և վերադաս ղեկավարություն	26,802	58,423

### (գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են Խմբի գործարքներն այլ կապակցված կողմերի հետ:

#### (i) Հասույթ և այլ եկամուտ

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2009թ.	Գործարքի արժեքը 2008թ.	Մնացորդը 2009թ.	Մնացորդը 2008թ.
<b>Արտադրանքի վաճառք</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	189,017	107,074	(74,756)	7,932
<b>Մատուցված ծառայություններ</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	1,138	23,522	137	23,064
<b>Տոկոսային եկամուտ</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	1,573	24,925	-	-
<b>Այլ եկամուտ</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	1,992	1,731	-	-

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները ենթակա են մարման կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ:

**(ii) Գնումներ և ծախսեր**

հազ. դրամ	Գործարքի արժեքը 2009թ.	Գործարքի արժեքը 2008թ.	Մնացորդը 2009թ.	Մնացորդը 2008թ.
<b>Ապրանքների գնում</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	14,046,990	9,458,460	1,640,451	(454,108)
<b>Ստացված ծառայություններ</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	209,540	419,155	(18,554)	24,323
<b>Տոկոսային ծախս</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	52,864	14,762	-	-
<b>Այլ ծախս</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	64,514	-	-	-

Կապակցված կողմերի հետ գործարքների բոլոր մնացորդները ենթակա են մարման կանխիկով՝ հաշվետու ամսաթվից հետո վեց ամսվա ընթացքում: Մնացորդներից ոչ մեկը գրավով ապահովված չէ:

**(iii) Փոխառություններ**

հազ. դրամ	Փոխառության գումարը 2009թ.	Փոխառության գումարը 2008թ.	Մնացորդը 2009թ.	Մնացորդը 2008թ.
<b>Ստացված փոխառություններ</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	5,538,445	2,248,343	4,401,490	777,981
<b>Տրված փոխառություններ</b>				
Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	23,500	1,321,000	59,952	49,769

Կապակցված կողմից ստացված փոխառության գծով կիրառվում է տարեկան 5% տոկոսադրույք, գրավով ապահովված չէ և ենթակա է մարման ըստ պահանջի:

2008թ. հունիսին «ՎՏԲ Բանկ» ԲԲԸ-ի հետ կնքված պայմանագրի և նախատեսվող նոր վարկային պայմանագրի համաձայն (տես՝ ծանոթագրություն 2(դ)) Խմբի մայր ընկերությունը և վերջնական վերահսկող անձը պետք է երաշխավորեն Խմբի կողմից վարկի մարումը:



## 29 Խոշոր դուստր ընկերություններ

	Գրանցման վայրը	2009թ.	2008թ.
		Սեփականություն/ Չայների իրավունք	Սեփականություն/ Չայների իրավունք
«Թեղուս» ՓԲԸ	Հայաստանի Հանրապետություն	100%	100%